A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
www.a-pdf.com

Գիրքը յուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԴՈՒՔ ԿՈՒԶԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԿԵՐԿՈՒՏՈՒՆ ՈՒՆԵԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԼՈՒՄԱՑԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿՈՄԿՈՆ՝

www.freebooks.do.am

ԵԼՈՒՅԱՊԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՆՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՆ
ՑԱՆԿԱՆԱԼՈՒՄ ԵՆՔ ՀԱԶԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

www.a-pdf.com

Գայրաութ

Ալիքսանդր Թիրեքյան

www.a-pdf.com

Ջուլյետա Արզումանյան

Մայրամուտ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ—1984

www.a-pdf.com

Սիրունյան, Ղ. Տ.

Ս 555 Մայրամե: Բանաստեղծություններ,— Եր.: Սովետ. գրող, 1984.— 128 էջ:

Մայրամեն Սասունի ազգային երգ-պար է, որը կապվում է Մարիամ անվան հետ, սակայն ժողովրդական հնչողությունը՝ Մայրամե է, և գրքի հեղինակը նախընտրել է ժողովածուն վերնագրել հարազատ մընապով ժողովրդական տարբերակին: Այստեղից էլ քընարական հերոսի հոգեկան աշխարհի մշտնջենական աղերսները հայրենի հող ու ջրի, ազգային բառ ու բանի հետ և աշխարհընկալման ավանդական հայացքների նորովի արտահայտությունները: Ժողովրդական մտածողության և հոգեբանության հիմքի վրա են հյուսված Ղ. Սիրունյանի բանաստեղծական աշխարհի հույզերն ու ապրումները:

4702080200 (38)

Ս ——————————— 84 (S) ԳՄԴ 84 < 7

705 (01) 84

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1984

www.a-pdf.com

ԵՐԱՆԵԼԻ ԲԱԽՏ ՈՒ ՇՆՈՐՀ

ԾԻՐԱՆԵՆԻ

Փխրուն ուսերիդ վրա ծանրորեն
նստել է ձմեռ-հսկա թռչունը.
ինքդ քեզ եղիր խրախույս ու հենք,
քեզանից կատ ո՞վ քո երակն ունի:

Քո փոխարեն ո՞վ ամռան արվեստում
պիտի արարի լույսը քո հաստի,
կարկուտից առած ցավդ հավվագյուտ
ո՞վ պիտի հիշի, ո՞վ պիտի պահի:

Ո՞ւր է իջնելու քո սիրո մեղուն,
որ դու չարձակես քո կանաչ գոտին,
ո՞վ պիտի հածի անհունից անհուն
Արարատյան կեզ դժվար ճամփեքին...

Մշակիդ սիրտը, տես, քողքոջ դառել,
ապավինել է քո նապուկ ճյուղին.
նրան էլ եղիր խրախույս ու հենք,
նրանից կատ ո՞վ քո երակն ունի:

www.a-pdf.com

ԱՅՍ ԿՅԱՆՔՆ Ի ՎԵՐ

Լեռներն ի վեր շարքով, ինչպես գովընդի մեջ
ծանր գնում են գյուղերը:
Դեմը ձոր է, ծաղիկ ու ձյուն
և առեղծված՝ ձորի, ծաղկի, առեղծված՝ ձյան,
վերում՝ երկինք՝ հունցված լույսով ու կարկուտով,
ցածում՝ երգեր՝ լույսի մասին ու կարկուտի:

Մեղմ գնում են գյուղերն՝ ինչպես գովընդի մեջ,
լեռներն ի վեր, ի վե՛ր, ի վե՛ր,
քարերի մեջ դաջված փոքրիկ, մանրանկար,
խոտերի պես աճած-ելած խոտերի մեջ:
Ցորեն-արտում անձրևի ու քամու խաղ,
ցորեն-հասկի խոհուն վրույց աստղերի հետ,
և հնձվորի հոգնած ոտքեր
և հնձվորի անուշ հայացք
գարունն ի վեր, աշունն ի վեր, ահա կյանքն ի վեր:

Լեռներն ի վեր շարքով, ինչպես գովընդի մեջ
ծանր գնում են գյուղերը,
այս աշխարհի, մեծ աշխարհի ձեռքը բռնած—
տեսեք ոնց են տանում հուշիկ
ծաղկաթերթի ցոլքի միջով,
ցողի լույսով, արտի նախշով,
հովվերգության ափով խաղաղ,
թեպետ բահն է առնում քարին
և մանգաղն է քարին կարկվում:

www.a-pdf.com

Երնեկ նրան, ով որ մնաց այս պարի մեջ,
երնեկ նրան, ում սիրտը որ արնում է դեռ,
երբ որ բահն է առնում քարին
և մանգաղն է քարին կարկվում:

ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ

Կանգնեց ծանրորեն, հաղթ ու ամեհի,
երկնակամարի այն նման ամուր,
կանգնեց քամու դեմ՝ ասաց՝ ինձնից տար,
քո տվածը տար ու էլ մի՛ օգնիր,
սրանից հետո կգնամ մենակ:

Կանգնեց քարի դեմ, քարից էլ կարծր,
քարից էլ խոժոռ, ասաց՝ տար ինձնից,
քո տվածը տար, էլ ինձ ուժ պետք չէ,
և դու էլ սրտիս վրայից ընկիր,
մի անգամ գոնե առանց քեզ շնչեմ:

Կանգնեց հողի դեմ, աստղի ու բախտի,
կանգնեց խռոված և դժգոհ և հաշտ,
ասաց՝ դե տարեք, ինչ որ տվեցիք,
բայց, ի սեր աստծո, ինձ տվածի չափ
չտաք մի մարդու— մեկին շատ է քիչ:

Կանգնեց ծաղկի դեմ՝ ծաղկից էլ քնքուշ,
ծաղկից էլ խոնարհ, ծաղկից՝ միամիտ,
ասաց՝ քո տվածն ի՞նչ էր՝ չիմացա,
ասաց՝ ո՞ւր էիր, այս ամբողջ կյանքում
քեզ երակեցի՝ մի անգամ չեկար...

www.a-pdf.com

ՈՒՋԱՆՑԻ ԾԵՐՈՒՆԻՆ

Այս թևերը իմը՝ չեն, չէ,
սրանք, լաո, որթատունկի թևեր են նուրբ,
որ խշշում են՝ իմ ուսերից կախված հեպիկ:
Իմ թևերը թողի էնտեղ՝
Մարաթուկի ուխտավորաց
շուրջպարի մեջ՝ հյուսված ամուր:
Էնտեղ թողի նախշուն լեկուս,
որ կրուցի իմ մանկության կանչերի հետ:
Իմ ոտքերը Մեղրագետի ընթացքն առավ,
տարավ մինչև աշխարհի վերջ,
աշխարհից էլ հանեց տարավ:

Ու չիմացա, թե այս կյանքում
ինչպես դարձա ես որթատունկ,
Արագածի կարծրության մեջ
շրթունքիս տապ ու հագիս՝ բուք,
կարկուտի մութ կարկեր ուսիս
ապրում եմ ես ու մահ չունեմ—
թե լացս ինձ թաղեց հողում,
երակներս հանում են վեր...

◆

Տուն արի, ասում եք, ցրտերն ընկան,
հանդում էլ ի՞նչ կա, որ դու չես գալիս...
Ախ, շատ կուզեի, որ ելնեմ ու գամ,
ու ձեզ հետ նստեմ իրիկնահացի:

www.a-pdf.com

Տունս հյուր լիներ և գինի ու տաղ,
տայինք-առնեինք գործից, աշխարհից,
բայց դե ի՞նչ անեմ, որ այսպես եղավ,
դուք սեղան պիտի նստեք առանց ինձ:
... Իրիկնապահին գալիս էի տուն,
տեսա՝ կարկտից երկինքը կախվեց,
մահվան պես կախվեց հանդին ու այգուն
ու պիտի փուլ գար անխիղճ, տնավեր:
Սրտով, մարմնով, ցավ ու երակով
ելա կանգնեցի երկնի հանդիման,
մնացի այդպես ու հենակ դարձա.
երկիր-երկնքին ընդմիշտ, հավիտյան:

ՍՐՏԻ ԲԵՌԸ

Մարմինը ձյան մեջ, հոգին՝ կրակի,
ելնում էր վերև նա դժվար ճամփով,
քարի հետ ոտած վեճի ու վռվի,
լույսի հետ միշտ հաշտ, անձրևից՝ դժգոհ:
Ելնում էր այդպես, գնում մի ողջ կյանք,
մինչև որ քարը ասաց՝ հոգնեցի,
և աստղը ասաց՝ քիչ դադար առ, մարդ,
էլ չեմ կարող քեզ լինել ուղեկից:
Մինչև որ հողը բացվեց նրա դեմ,
մի պատառ երկինք փաթաթվեց նրան—
և նա կանգ առավ խաղաղված, անքեն,
նայեց՝ անցել է երկար ճանապարհ

www.a-pdf.com

ու գոհացավ շատ, ներեց ինքն իրեն,
բաց արեց սիրտը աշխարհի առաջ...
Եվ այդքան տարի նրա բեռն ի՞նչ էր,
որ տարավ՝ հոգուն, մարմնին ճնշած—
բեռը խնձոր էր, վառվռուն խնձոր,
քաղցրիկ խնձոր և ուրիշ ոչինչ
ու խնձոր տեղաց, իջավ գիլ-գլոր
երկնքի խորքից թափվեց աշխարհին:

ՁԱՐՄԱՆՔ ԿՅԱՆՔ

Ես, թվում է, ապրեցի շատ,
մի կյանքից շատ այս աշխարհում—
մի կյանքն ի՞նչ է, մի ակնթարթ,
որ անց կացավ դեռ իմ նախշուն
օրորոցում,
Մշու խորոտ խաղերի մեջ...
Մնացածը կարմանք բան էր:

Հենց քայլ արի՝ իմ կյանքը չէր,
և իմը չէր ճանապարհը,
ջրի բախտ էր,
ծաղկի, աստղի ու կրակի
բախտ էր, որ ինձ մերթ տանում էր
բերկրության մեջ,
մերթ բուսնեցնում քամու թևին:
Ես ո՞նց անցա

www.a-pdf.com

այդքան դժվար, ցավոտ ճամփա,
թե ջուրն անցներ՝ ջուր չէր մնա,
ես ո՞նց անցա,
աստղն անցներ՝ կմոխրանար,
ծաղիկն անցներ՝ փուշ կդառնար,
կրակն անցներ՝ աշխարհ կայրեր,
բան չէր մնա,
ես ո՞նց անցա...

Իմ կյանքն ի՞նչ էր, մի ակնթարթ,
որ ապրեցի դեռ իմ նախշուն
օրորոցում,
Մշու խորոտ խաղերի մեջ...
Մնացածը կարմանք բան էր:

ՀՐԱՇՔ

Հրաշքը նաև այսպես է լինում.
հնձվորը արտում մեռնում էր ծարավ,
հասկերի ոսկին, հասկերի ոսկին
կյանքի պատրանք էր աչքերի առաջ:

Հրաշք չի լինում,— ասում էր տապը,
հրաշք ես աշխարհ,— հնձվորն էր ասում,
որ ես քո մեջ եմ, քեզանով լցված,
թեև քեզանից անմասն ու ծարավ:

Հրաշքը նաև այսպես է լինում.
մի նապուկ բարդի կով շոյանք բերեց,

www.a-pdf.com

մի աչք-ամպ եկավ կարոտի ցոլքով
ծովերի սրտից անուշ թոն բերեց:

Հրաշք չի լինում,— ասում էր տապը,
ու հնձվորի կյանքն առած գնում էր...
Հրաշքը նաև այսպես է լինում,—
հնձվորն էր ասում հասկերի միջից:

ԾԱՌԸ

Մարմինս ընծա երկրի այրումին,
հոգիս հանձնած երապին կանաչ,
անցնում էի ցուրտ օրերի միջով
անցնող-դարձողին սեր ու սիրտ պարված:
Այն ո՞վ էր ասաց՝ երգիր, սիրելիս,
ու ես ծաղկեցի գույների պարսով,
այն ո՞վ ինձ ասաց՝ ցնծա, պար արի,
ու պտուղ դարձավ ցնծությունն իմ ծով:
Թվում էր՝ կորցրի լռություն ու ցուրտ,
թվում էր այդպես՝ ծառ եմ ցնծության
գգվանքների մեջ, դավերից հեռու
հունիսյան շողշող ճամփեքի վրա:
Թվում էր՝ դուրս եմ եղանակներից,
թվում էր՝ նյութ չեմ, դարձա մեղեդի,
երբ Ցուրտը ասաց՝ եկա, սիրելիս,
Ձյունն ասաց՝ կրկին քեզ հանդիպեցի...

www.a-pdf.com

ԽՈՍՔ ԻՄ ՄԵԾ ՊԱՊԻՆ

Քեզնից հետո մեր աչքերին
քո հայացքը մնաց ընծա՝
այս աշխարհին հառած անուշ:
Տագնապ ու սեր, արցունք ու լույս
շաղած իրար՝ նայում ես, թե
արեգակը սարից ելավ,
ինչպե՞ս անցավ մեր տան մոտով,
թե անձրևը ի՞նչ կբերի
մեր արտերին ծարավ, տոչոր,
թե մեկանից ով ուր գնաց,
ով ետ դարձավ տունն իր նորից:

Քեզնից հետո Մեղրագետից
իբրև ընծա, քաղցրիկ ընծա,
աջդ ցոլաց ու հասավ մեկ
մղձավանջի միջով կարծր:
Ու տալիս ենք աջդ մարդկանց,
բարեկամի բարև առնում,
աջիդ ուժով կռիվ տալիս,
գրում երգեր լուռ կարոտի,
գինու թասեր բարձրացնում վեր,
խենթ ցնծության հրդեհ ցանում
ձյունների մեջ ու սառույցի:

Քեզնից հետո մեր սրտերում
քո սրտի տաք սերը մնաց—

www.a-pdf.com

քո սերն ասաց՝ մի վարդ սիրիր,
այս աշխարհի վարդերի մեջ,
մի տուն պահիր այս աշխարհի
տների մեջ շեն ու շռայլ,
մի երկմտիր քո սիրո մեջ
ու ցավիդ մեջ մի երկմտիր,
քո բաժին կյանքն ապրիր հատու,
ու քարի հետ ու աստղի հետ
քո կռիվը մի մոռացիր:

ԲԱԼԼԱԴ ՄԵՐ ՏԱՆ ՄԱՍԻՆ

Տունն, ուր ծնվել եմ,
Արագածի լանջին էր,
ծիրանիների պսակի մեջ,
հայացքն Արարատի խաչելությանն հառած:

Գարնանը
մեր տունը սարքվում էր
ծաղկաթերթերից:
Ծաղկաթերթերը իջնում էին
սիրով, լույսով, ցնծությամբ,
շաղախվում քաղցրությամբ սրնգի
և թրթռուն բույրով
ծածկում ամեն նեղություն ու չարիք.

Ամռանը
մեր տան պատերը

www.a-pdf.com

հորեղբայրներիս
հոգնած մեջքերն էին,
դուռը հորդորն էր պապիս,
պատուհանները մորս աչքերն էին՝
սիրով, արցունքով բացված՝
դեպի տակ տնքացող
հորս հոգու վրա:

Աշնանը
մեր տունը չկար,
մանիկ-մանիկ լուծվում էր
հարսանյաց պարերի մեջ,
մի անանուն տխրությամբ օրորվում
երջանիկ պահերի շուրջ,
գինու կեկ արբունքի նման
տարածվում էր գյուղի մարմնով մեկ,
հոսում գյուղից դուրս,
հասնում ուրիշ քաղաք ու գյուղ,
ուր էրգրից մի ծանոթ կար
ու քաղցր երակներով լի գլուխը դնում
հին բարեկամների ուսին:

Ձմռանը
մեր տունը կողպվում էր
մշուշով, ձյունով, ցրտով:
Առավոտն իմանում էինք՝
պապիս խուլ երգով
Մշո դաշտի աննման գեղեցկուհու մասին,

www.a-pdf.com

Քեզ պարտք եմ նաև ու շնորհակալ
իմ չտեսած ծաղիկների համար
և ամեն մի դժվարության համար,
որ դու տվեցիր ինձ վստահորեն.
ուրեմն ես քեզ հարապատ եմ շատ,
ուրեմն ես իմ ապրելիք կյանքում
պիտի քեզ միայն թեթևություն տամ:

Ես պիտի անցնեմ քո սրտի միջով,
ինչպես մեղեդին պայծառ հույզերի,
անցնեմ վշտիդ հետ, սիրուդ հետ ետ գամ,
աչքիցդ իջնեմ իբրև արտասուք,
վվարթության հետ եւ դառնամ կրկին
ու որքան պարտքիս կայծերը մարեմ,
թող նրա հրդեհն առավել ծաղկի:

ՇՆՈՐՀԱԻՄ

Ոսկետեսիլ վայրկյանի միջով
գալիս էր երգեցիկ խումբը
Արարատյան պսակը սիրո
պահած գլխից վեր, գլխից վեր:

Առջևից Քարն էր քնքշաիրտ՝
հոգու մեջ խաչերի խլրտուն—
քո սիրտն էր բերում Քարը:
Քո սիրտը:

www.a-pdf.com

Ապա Ծաղիկն էր խոնարհ գալիս
աչքերում հապվագյուտ արցունք—
քո արցունքն էր բերում Ծաղիկը:
Քո արցունքը:

Հետո Ջուրն էր ծորում Արագածից
սիրո այրվող երակներով—
քո ծարավն էր բերում Ջուրը:
Քո ծարավը:

Եվ Ծիրանի ծառն էր գալիս
լույս ու համի ծիածանով—
քո բախտն էր բերում Ծիրանի ծառը:
Քո բախտը:

Հայրդ դեռ թաղված էր դաշտում,
ծիլը նրան աշխարհ չէր բերել,
մայրդ չէր դարձել աղբյուրից,
կժերը դեռ չէին լցվել,
սակայն կար արդեն քո կյանքը,
որպես ծննդյան թավիշ մեղեդի,
որ սփռելով անցնում էր երգեցիկ խումբը՝
Արարատյան պսակը սիրո
պահած գլխից վեր, գլխից վեր:

www.a-pdf.com

ՄԱՅՐԸ

Գաղթական կանանց հիշատակին

Ձյուն էր, ձյուն էր,
արար-վարար,
ձյունե կրակ՝
երկինքն ի վեր, երկինքն ի վար...
Ուժատ, մենակ հրում էր նա
Արագածի պսակն ի վեր
հեռվից բերած մի օրորոց՝
եկրին վարդեր,
շուրջն համբարձում,
մեջը՝ քնած
տաղ ու օրոր,
ցորեն ու սիրտ
ու խրախույս:
Սուրսայր քամին դեմը կտրեց,
դեմը կտրեց՝ սերը տարավ,
սովը ոռնաց մութ ձորերից,
մութ ձորերից՝ տեսքը տարավ,
մահը ելավ խանձված հողից,
խանձված հողից՝ մարմինն առավ:
Միայն ցավը մնաց նրան,
ցավն ո՞ւմ էր պետք, որ տանեին...
Ու ցավից նա հունցեց իրեն
մի նոր մարմին
նոր տեսք ու սեր,

www.a-pdf.com

նոր ուժ ու կամք
ու քայլ արեց, հրեց կրկին
Արագածի պսակն ի վեր
հեռվից բերած օրորոցը
եկրին վարդեր
շուրջն համբարձում,
մեջը՝ քնած
տաղ ու օրոր,
ցորեն ու սիրտ
ու խրախույս:

ՄԻ ԵՐԳԻ ՁԱՓ ՈՒ ԼԱՅՆ

Բարձրիկ սարերի ուսին
գիշերն էր մեղմ օրորվում—
գիշերը շուշան ծաղիկ,
աչքին՝ քամի ու արցունք,
սրտում՝ կրույց մայրիկի
և վառարան մարմրուն:

Մի ձյունե հավք հապարան
հեքիաթներից թռավ դուրս,
այս էլ քանի օր, ամիս,
այս էլ քանի, քանի կյանք
թափ է տալիս թևերից
աշխարհին ձյուն ու մշուշ:

www.a-pdf.com

Երկինքը խոր, գաղտնահունց,
գիշերը՝ ձյունե ծաղիկ—
ոչ հասցե կա, ոչ ճամփա
և ոչ հրաշք մի վերին—
ինչպե՞ս ես ձեզ մոտենամ
հեքիաթ և հավք և մայրիկ:

Ոչ մեկը այս աշխարհում
չգիտի, թե դուք ուր եք,
գիտի դուդուկը միայն,
մեկ էլ երգչի սիրտը ծեր:—
Ի՞նչ են նրանք ասում ինձ
ձեռքերի մեջ հալվելով:

Ես գալիս եմ օրեցօր
երգչի ծեր սիրտը առած,
ճմլվելով երգերում,
ճիշտ ձեր հետքով եմ գալիս,
բայց միշտ հեռու ձեզանից
մի երգի չափ ու լացի:

ՄԻ ԻՐԻԿՈՒՆ

Մի իրիկուն՝ լուսնալույսով,
բողբոջներով ձյան ու լույսի,
ամանորի քայլեր կնգուն
երկնից իջնող ճամփաներին:

www.a-pdf.com

Մի իրիկուն՝ գործված նախշուն
սրինգների կվարթ ձայնով
և մի պսակ— հապարան հավք՝
մորս ձեռքին, մորս սրտում:

Մի իրիկուն՝ ծաղկած քամով,
շուրթին՝ անուշ խոսք ու կրույց—
ո՞ւր էր թռչում հավքն հապարան,
թևից թափում ձյուն ու մշուշ:
Մի իրիկուն՝ կանգակներով,
սայլը կանգնած ձնած դաշտում,
հայրս՝ կրծքին կանաչ մի վերք,
սրտից ցորեն է հորդում:

Մի իրիկուն՝ հեքիաթներով՝
վճիտ, խաղաղ սրտերի շուրջ,
և մի սրինգ, կվարթ սրինգ
ձեռքերիս մեջ համր ու լուռ:
Մի իրիկուն՝ բացված դռնով
խորհրդավոր մութը դեպի,
ամանորի գաթան ձեռքիս
ես գնացի, ո՞ւր գնացի...

Ախր ինչպե՞ս եղավ, մայրիկ,
գյուղամիջից ես տուն չեկա:
Դու քաղեցիր թոնրի շուրթից
ամանորյա նախշուն գաթան

www.a-pdf.com

ու շարեցիր լուսին-լուսին
եղբայրներիս թևիկներին...
Կարմիր տոն էր պատանության,
հիշատակի երգ ու երկինք,
մեր տան ճամփան մոլորեցի,
ախր ինչպե՞ս եղավ, մայրիկ:

Ի՞նչ ծաղիկ էր, որ քաղեցի՝
շուրջս փոխվեց ամեն մի բան,
Ջուրը հանկարծ կանգնեց դեմս,
ասաց՝ ես եմ ճամփան, անցիր,
Փուշը ծակեց, ասաց՝ ես եմ,
Քամին երգեց, ասաց՝ ես եմ:
Ես եմ՝ ասաց Ղամեն մեկը,
ես եմ ճամփան, մի երկմտիր:
Ու բոլորն ինձ առան տարան...
Ախր ինչպե՞ս եղավ, մայրիկ:

Ջուրն ինձ սնեց գաղտնիքներով,
տվեց ծարավ ու թափառում,
այս կյանքն ի վար, այս կյանքն ի վեր,
Քամին տվեց ցնորք ու սեր
և արցունքի պահ վաղանցիկ:
Փուշը պատժեց ամեն քայլիս,
ու որ ներեց՝ Փուշն ինձ ներեց:
... Կարմիր տոն էր պատանության,
հիշատակի երգ ու երկինք,
ախր, ինչպե՞ս եղավ, մայրիկ:

www.a-pdf.com

◆

... Այդպես դու կյանքում շարժվում ես, գնում
բոլոր հուներով քո երկրի,
ջրի հետ անցնում իմաստուն ճամփա՝
դեպի խորքերն անտես, հագուրդը՝ ծարավի:
Եվ ապա հագնում ես ստվերը քամու,
պանում օդով թռչող սերմերի հետ,
մտնում հողի դրախտ-դռներից ներս,
ապրում կռիվը հողի ու բույսի
և ապրում նրանց հաշտությունը մեծ
ու հողագործի սիրո թևերին
աշնանը միայն վերադառնում ետ:

Այն պահին, երբ մութ խորունկ ձորերով
գրտահար հոտն է իջնում Արագածից,
դու հնչում ես հովվի երգի հետ թախծոտ
որպես կարոտի վճիտ մեղեդի:

Դու դադար ես առնում հնձվորի հոգում,
պարկ գրույցներից խմում սառը ջուր
և հմուտ քարտաշների ներշնչանքում
ճաշակում լույսի նշխար մի սուրբ:
Ապա շարժվում ես խորությամբ երկրիդ,
անցնում բոլոր-բոլոր հուներով՝
ընդերքով մեր խոսքի, սիրո, կորստյան
և ըմբոշխնում ծաղկունքը բառերի...

www.a-pdf.com

ԿՈՄԻՏԱՍ ԱՍՏՂԸ

Ծիրանի ծառն հարս գնաց,
ճամփին ձյուն արեց,
թերթիկ-թերթիկ քողն ընկավ,
մայրը ճերմակեց:

Գարնան սիրտը փուշ մտավ,
տատրակ հավուն վա՜յ,
հարսանքավոր, քո ճամփան
աշխարհից եկավ:

Կոմիտաս վառ աստղը
ցոլաց ձյուն ճամփին,
սրտիկ-սրտիկ տաղ տեղաց
ծառին ու հավքին:

Է՜Յ, ՄՈՄԻԿ ՎԱՐՊԵՏ

Միջնադարյան մի առավոտ, Մոմիկ տղան
եկավ տանից ու այլևս ետ չդարձավ,
մայրը ձայնեց, երկար ձայնեց կանգնած կտրան,
հայրը պեղեց ամեն մի ձոր ու քարանձավ,
թուխ յարի սիրտն աղբյուր դարձավ, հոսեց-գնաց,
Մոմիկ տղան ավա՜ղ չեկավ, ավա՜ղ չեկավ:

Նրան տարավ խենթ, քմահաճ քարի Ոգին,
տարավ բանտեց կարմիր տուֆի փխրուն սրտում

www.a-pdf.com

և ժեռ քարի կարծրության մեջ անհնարին,
և սև տուֆի երանության խորխորատում,
ասաց՝ ուրիշ դու կյանք չունես իմ կյանքից վատ,
ես քո հայրն եմ, դու՝ իմ որդին՝ անսեր, անտուն:

Ասաց՝ հանիր շռայլորեն իմ քար սրտից
այս երկրի տեսիլքները բարդ ու վճիտ,
սփռիր քարին որպես սիրո հայտ-ավետիս
և ապգերին և երկնքի անհագ աչքին...
Ասաց՝ տոկա, ճգնիր, քեզ մահ չեմ ընծայում,
ահա ես էլ քեզ եմ գալիս՝ հլու աջիդ:

Ու բողբոջեց Մոմիկ տղան քարի սրտում,
քարի վրա ծաղկեց թերթ-թերթ, հատիկ-հատիկ—
աշխարհում պաղ ձյուն էր իջնում, թե սև կարկուտ՝
քարի վրա թեժ ամառ էր, լույսի ալիք...
Մոմիկ վարպետն ի՞նչ իմանար, որ շատ վաղուց
ինքը չկա, բայց խփում է մուրճը քարին:

... Ու լուսադեմ խաչքարերի պսակի շուրջ
թրթռում է մի առավոտ միջնադարյան,
դեռ տքնում են, դեռ կնգում են մի սիրտ ու մուրճ,
մարդու մի ցավ՝ այնքա՜ն խորունկ, այնքա՜ն
խաղաղ...
Մի անուշ ձայն դարեր հեռվից կանչում է խուլ.
Հե՜յ, ո՞ւր ես, ո՞ւր, Մոմիկ տղա, Մոմիկ տղա...

www.a-pdf.com

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Եկավ գյուղերի կանաչ ափերից
և երգիչների հույզերից առատ,
եկավ վանքերի նախշ ու կարդերից՝
գինու գավաթը հոգու մեջ պարպած:
Եկավ սրտերից խենթ քաղաքների,
աստծո աշխարհի մեղրը ճաշակած,
եկավ ու կանգնեց աստըծո դիմաց
և լուսնի դիմաց և ձյան ու քամու,
ասաց՝ ծարավ եմ, ու խոսքը խոսք չէր,
ջուր էր արծաթհունչ, որ ցոլաց գնաց
դեպի գյուղերի սիրտը հեռավոր:
Ասաց՝ ցաված եմ, ու խոսքը խոսք չէր,
անուշ երազ էր, որ թևեց իջավ
քաղաքների թաց աչքերի խորքը:
Ասաց՝ կվարթ եմ, ու խոսքը խոսք չէր,
երգ էր մի նախշուն, տոնի պատառիկ,
որ սիրո նման վարար հորձանքով
աշխարհը առավ տաղ ու չափի մեջ:
Աշխարհն իր հունով, իսկ ինքը մնաց
հավիտյան կանգնած աստըծո դիմաց
և լուսնի դիմաց և ձյան ու քամու
ասաց՝ ծարավ եմ, ցաված եմ, կվարթ:

www.a-pdf.com

◆

Բարդու վրա աշնան սիրտն էր
տակավին տաք, թպրտացող...
Ու մեկնեցին ծեր ջրվորն ու բարակ առուն
երկնային ձիգ կածաններով...
Մեկ հետ էին, քայլում էինք
նույն քար-հողի սիրով խաղաղ,
նույն քար-հողի ամենախիստ պատժին գերի,
և հանկարծ այդ հրաշքն եղավ—
աշխարհն ամբողջ սուզվեց մի պահ
տեսիլքի մեջ սուրբ ցորենի,
արտի սրտից խուլ կնգոցով ընկավ մի բահ
ու մի դողանջ՝ արցունքի շիթ:
Սերովբեներ անցան օդով
օրհներգումի ճյուղեր ձեռքին,
սիրո նման մի լուսալիք իրիկնապահ
որպես օծում իջավ գյուղին:

Հրաշք եղավ մի օր դարձյալ,
կյանքը առավ ցնծության լուր.
երկնային ձիգ կածաններով վերադարձան
ծեր ջրվորն ու բարակ առուն:
Վերադարձան դարձած անձրև
ու տեղացին ինքնամոռաց
մինչև վերջին կաթիլն իրենց, մահը մինչև՝
դպշտերի բաց արտի վրա:

www.a-pdf.com

ԲԱՐՈՎ ԵԿԱ, ԲԱՐՈՎ ԳՆԱՄ

Ծառուկ, ծառուկ, աչքերդ բաց,
գարնան ճակատն է պարդարվել
ծաղիկներով ու խնդությամբ,
տես, թե ով է եկել կվարթ,
կանգնել քո դեմ:
Նրան սերդ է աշխարհ բերել,
որ դու հենվես նրա ուսին,
և պտուղդ նրա սրտում հասունանա,
որ քո բաժին կարկուտն իջնի
նրա թևին,
և նա ցավի միջից երգի՝
երանի՜ ինձ, բարով եկա:

Ծառուկ, ծառուկ, աչքերդ բաց,
տես, թե ով է անցնում, գնում:
Սերդ է նրան առած տանում
աշխարհից դուրս՝ կվարթ, կվարթ:
Նա մեկնում է
քո պտուղով լցված սրտով,
կարկուտներից կոտրած թևով,
քաղցրիկ լեկվով:
Նա ասում է՝ երանի ինձ,
ինչ որ տեսա, ինչ ապրեցի,
բարո՜վ գնամ:

www.a-pdf.com

ԱՅՍՊԵՍ ՏԵՍԱ

Տեսա խոսքը՝ շուրթից հեռու,
սրտի խորքում, խանձարուրում,
շուրջը՝ լույսեր,
մեղմ հույլերի պայծառ պսակ,
ու այրվում էր, խոսքը այրվում
մի ամբողջ կյանք
անպատասխան:

Կեսօրվա դեմ տեսա վարդը,
որ գալիս էր սիրո միջից,
փշի վրա՝ պատասխանը
այրվող խոսքի:

Ես անցնելիս տեսա քարը,
որ ընկել էր մեկի սրտից,
շողում էր նա լույս ու ոսկով
ապատության թևերի մեջ
ու փախչում էր, գլորվում էր
իրեն բանտած սրտից հեռու:

Երեկոյան տեսա սիրտը,
որ գնում էր խենթի նման,
ամենուրեք որոնելով
ու ձայնելով աղեկտուր
իր թևերից ընկած քարին:

www.a-pdf.com

Ես չգիտեմ,
գուցե և կար այլ ճանապարհ,
որ ես չանցա,
կար այլ հայացք աչքիս տրված,
որ չունեցա,
բայց անցնելիս իմ բաժինը,
ինձ տրվածը
այսպես տեսա ճանապարհիս:

ՋՎԱՐԹՆՈՑ

Առավոտի արծաթ ծաղիկ՝
թերթերի շուրջ լույս ու թռչնի ցնծուն պսակ,
սիրո շարժում ու մեղեդի,
սերովբեի անուշ հայացք:
Եվ խորություն սեր ու լացի,
Երկրից խոր, Երկնքից խոր, խոր ու խորունկ,
կյանքի, մահվան կրույց անծիր,
անհնարին մի դաշնություն:
Եվ խոտերից հյուսված տավիղ,
և փշերից գործված լարեր՝ նուրբ, երգեցիկ,—
ո՞վ է անտես հապար տարի
դեռ նվագում՝ արնելով սիրտ:
Արնած սրտից ու նվագից
կոհված որմին դեռ խաղողն է լցվում հյութով,
դեռ ցնծում է լույսը խաչի
քարի մթնից— լույս սիրավո՛ր:

www.a-pdf.com

Ո՞վ է անտես միշտ հեռանում
կարմիր խաչից ու ողկույզից մինչ լուսաբաց,
ո՞վ է կրկին միշտ ետ դառնում՝
աչք ու սրտի վրա բացված
առավոտի արծաթ ծաղիկ՝
թերթերի շուրջ լույս ու թռչնի ցնծուն պսակ,
սիրո շարժում ու մեղեդի,
սերովբեի անուշ հայացք:

ԱՇՆԱՆ ՕՐ

Գորշ անձրևների մեջ
օշինդրը կկորցնի իր բույրը,
քամին մոլորյալ ժամերը
տերևների պես կքշի աջ ու ձախ:
Ժամանակը
պոկեպոունկ լցված կլինի
անձրևով. ծխով
և կավով, որ տնքում էր մարդու պես,
որ սահում, հոսում էր կյանքի պես,
որ ամբողջ ամառը
երապեց մարմին ու ձև ստանալ:
Կլինի մեկը ճիշտ ինձ նման,
որ այս ամենի մասին
կուզենա երգեր գրել,
բայց կհամրանա տեսիլքների մեջ
ու կդառնա երգեցիկ հնչյուն

www.a-pdf.com

երկնքի անհուն փլվածքներում:
Կանցնի մեկը ճիշտ իմ դեմքով,
ճիշտ իմ քայլքով՝ հակված
հողին ու ջրին,
ինչ որ բան կիսատ թողած,
ինչ որ բան չարած բնավ,
ինձ պես՝ ուրախ ուրիշներով,
ինձ պես՝ իրենից դժգոհ:
Կելնի մեկը ճիշտ ինձ նման
հասուն ու հորդուն կավի միջից,
մրգերից, կրուպցներից, գինուց՝
գորշ անձրևների լույսով բռնկված,
օշինդրի բույրը մաղերի մեջ:
Այս աշնան օրը՝ գույնզգույն անիվ,
նրան կտանի
իմ ապրած սիրուն աշխարհի միջով,
քաղցրիկ երակներիս ընդառաջ:

ԵՐԳՆ ԻՆՁ ԱՍԱՑ

Ահա բացվեց ցնծության վարդ
իմ սրտի մեջ ու իմ կրծքին,
և աշխարհում հրդեհ դարձավ
ջահելության կրակ-ոսկին:
Երգն ինձ ասաց՝
տես, քո սիրտ գավաթը լի
ո՞նց է հեղվում անխղճորեն
ամեն աչքին, ամեն սրտին:

www.a-pdf.com

Երգն ինձ ասաց՝
պիտի գնամ երգիչների
բորբոք ձայնին միշտ ունկնդիր
և իմ բաժին սիրո դավին,
կախարդանքին՝ հոժար ու հաշտ,
պիտի գնամ հավետ գինով
սիրո դավից, կախարդանքից,
ինքս իմ դեմ՝ կրակ ու ջուր,
լաց ու ծիծաղ,
ինքս իմ դեմ՝ արտ ու կարկուտ,
ծարավ ու շոգ:

Երգն ինձ ասաց՝
երբ ցնծության վարդը փակվի
քո սրտի մեջ ու քո կրծքին,
ես կլինեմ
քեզնից հետո՝ մրմունջ ու ծեն,
քեզնից հետո՝ երգված երգ:

ՂՈՒԿԱՍ ՏՂԱ

Քո ծնունդից շատ առաջ է սկիզբ առել
այն շարժումը երանելի, որ շնորհեց
երկնի, երկրի բարդ թելերից հյուսած քեզ կյանք...
Որ մոտեցավ քեզ նախ իբրև վտանգի ձեռք,
ապա մղեց հոգիդ դեպի սեր ու հիացք,
ինքը ցոլաց այս կյանքի սահմաններից վեր...

www.a-pdf.com

Դու մնացիր կարմանալի դատով դատված.
որոնում ես կորուսյալ բախտ, դյութանք ու սեր,
կռացել ես ոսկե բեռան ծանրության տակ,
իսկ տերերին չես գտնելու երբե՛ք, երբե՛ք:
Դեռ տանում ես դաժան բեռդ սիրով ու հաշտ,
թեև գիտես՝ բեռիդ ոսկուց մաս չկա քեզ...

Այս աշխարհում միայն մեկը կա, մեկը, որ
պիտի տեսնի քո արցունքը, քեզ սատարի,
երբ էլ լինի, պիտի գնաս դու նրա մոտ,
ողջ, թե մեռած՝ գնաս, բախես նրա սիրտը,
ասես՝ օգնիր Արարատյան ծիրանի ծառ,
այս անգամ էլ սիրուդ լույսով պսակիր ինձ:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ—ԾԱՂԻԿԸ

Վերջին մեծ պատերազմից հետո
մեր տանը,
մեր երկրում,
մեր մոլորակի վրա
ժամանակը փշրվեց երեք մասի,
բոլոր անցքերը,
կյանքերը,
վերքերը, մահերը,
բոլոր երկրային,
անգամ երկնային
եղած ու չեղած բաները

www.a-pdf.com

երեք նոր հասցե ստացան—
պատերազմից առաջ,
պատերազմի ժամանակ,
պատերազմից հետո:

Վերջին մեծ պատերազմի,
ծծումբի ու մահվան բերանից
մեր տանը,
մեր երկրում,
մեր մոլորակի վրա
փրկվեց մի փոքրիկ, աննման ծաղիկ,
և ծաղիկը պսակեց հորեղբորս հիշատակը
ու նա դարձավ ծաղիկ-վոհ,
և ծաղիկը պսակեց
հորեղբորս որբուկին
ու նա դարձավ ծաղիկ-մանուկ,
և ծաղիկը պսակեց համայն աշխարհը
ու նա դարձավ ծաղիկ-աշխարհ...

Վերջին մեծ պատերազմից հետո,
այժմ,
այս պահին,
հնարավոր է վերացնել, ջնջել
ժամանակը,
բոլոր անցքերը,
կյանքերը, վերքերը
մեր մոլորակի վրա
և բոլոր երկրային

www.a-pdf.com

նաև երկնային
եղած ու չեղած բաները
այլևս հասցե չեն ստանա,
քանի որ դա կլինի
ամենավերջին անցքը
մեր մոլորակի վրա
և չի փրկվի փոքրիկ ծաղիկը,
որ պսակի մեկ,
չի փրկվի մեր տունը,
որ պսակվի.,,
Իսկ հիմա այս ամենը
ես կասեմ այնպես,
ինչպես հավատացած եմ,
որ պետք է լինի.
— ոչ այժմ,
ոչ երբևէ
հնարավոր չէ վերացնել, ջնջել
ժամանակը,
բոլոր անցքերը,
կյանքերը, վերքերը
մեր մոլորակի վրա,
քանզի միշտ կյանքը հաղթել է մահին,
քանզի այս հողում է միմիայն աճում
խաղաղություն— ծաղիկը
կորավոր,
արդար,
ամոքիչ:

www.a-pdf.com

ԵՐԱՆԵԼԻ ԲԱԽՏ ՈՒ ՇՆՈՐՀ

Ա.

Այս աշխարհում,
մեծ աշխարհում
ունեմ մի ծառ ծիրանենու,
վրան՝ պտուղ ոսկեղենիկ,
շուրջը ամառ, տապ ու կրակ,
անցած ձմռան ջարդված սրեր
ու խաս հավքի պոկված փետուր,
պոկված դայլայլ խոտերի մեջ,
քարերի մեջ, աստղերի մեջ
ու բախտիս մեջ:

Ունեմ մի ծառ ծիրանենու,
որ ծաղկում է հարսի նման,
մոր պես անուշ, լուռ ծերանում
ու հոր նման կրակ դառնում
ձմռան ցրտին:

Ի՜նչ ծանր սեր,
երանելի բախտ ու շնորհ՝
լինել տերն ու ուշակն հլու
տոհմիկ տրված գեղեցկության,
նրա անուշ տեսքը առնել
աչքերիդ մեջ,
համը՝ հոգուդ,

www.a-pdf.com

այդպես գնալ ճանապարհդ
այս աշխարհում
խոտի միջով, քարի միջով,
երգի միջով ու աստղերի:

Բ.

Ես ինչպե՞ս եկա, ի՞նչ ճամփա էր, որ
հմայեց, բերեց, ու ես կանգնեցի
խոտերիդ կողքին, բուք ու քամուդ դեմ,
որձաքարիդ դեմ, լույսիդ ու հացիդ:

Ես ինչպե՞ս եկա, այդ ի՞նչ ճամփա էր,
որ ինձ պարգևեց մի երկրորդ հայացք,
ու ես տեսա քեզ, երկիր Հայաստան,
շուրջս, վերևում, կողքիս, իմ դիմաց:

Որ ես տեսա քեզ խոտերիդ աչքով,
քարերիդ աչքով, քամուդ, աստղերիդ,
դե ապրեցըրու ինձ նրանց կյանքով,
նրանց նման էլ դատիր ու ներիր:

Գ.

Ծաղիկն ինձ ասաց.
քո նախատատն է ժպտացել մի օր
քնքշագին սրտով,
նրա ժպիտն է առել իմ սրտին,
և ես՝ հասարակ, անանուն խոտս
դարձել եմ ծաղիկ այս աշխարհի մեջ:

www.a-pdf.com

Ծաղիկն ինձ ասաց.
ամեն Ապրիլին կելնեմ ես հողից
առավել քնքուշ, առավել բուրեղ
ու չեմ երկնչի
ձյունից, կասկածից, մետաղից, մահից,
քանզի ամեն ինչ տեսել, տարել եմ
և նորություն չէ ոչինչ ինձ համար,
ընդհակառակը, ինձ՝ ծաղկիս համար
այս դժվար երկրի պատմության բովում
նորությունը լոկ ծաղիկի կյանքն է:

Դ.

Ցորենն ինձ ասաց.
քո նախապապը ինձ գտավ մի օր
խոտ ու փշի մեջ անանուն ընկած:
Նրա ձեռքը իմ սրտին ցոլ տվեց
ու կրակ-ոսկի դարձրեց կյանքս,
ապա օծեց ինձ սուրբ նշաններով,
խորհուրդներով թանկ
ու տարավ դրեց աստղերի թագին:
Ցորենն ինձ ասաց.
հագեցիր ջրից, անձրևից՝ երբեք,
դողա պաղ սրտից, կարկուտից՝ երբեք,
ձյունից, կասկածից, մետաղից, մահից
մի սարսիր բնավ, նրանցից բարձր
համասփյուռ, պայծառ
ցորեն-պապերիդ աչքն է քեզ նայում
աստղերի թագից:

www.a-pdf.com

Ե

Ջուրն է ցոլում հորդ, իսկ դու, արեգակ,
ինձ խարկեցիր շեկ քարափի վրա,
ջուրն է ցոլում հորդ ձորի մեջ անտակ,
ես վերում խոտ եմ, կարոտ ու ծարավ:

Ո՞վ ինձ պարգևեց այսքան մեծ շնորհ,
որ թե քար լինեմ, լինեմ արտից դուրս,
որ թե բուք լինեմ, սարերում վայեմ,
ծաղկած դեղձենուց հավիտյան հեռու:

Զ.

Անանուն գրիչ,
ի՞նչ շնորհով ծաղկեցիր
այս հողն ու քարը,
որ ամենասաստիկ կարկտից հետո էլ
դեղձենին պահում է
իր աննման պտուղների հուշը
և ճյուղերին տերևներից շատ
երակներ են կանաչում:
Անանուն գրիչ,
այդ ի՞նչ անհնար կորացմամբ ու տեսիլքով
ծաղկեցիր մեր երկինքը,
որ այս սոսկալի ժամանակում
մահաբեր ծխի ու փոշու ամպեր չլինեն,
և աղջիկն ուխտի գնա Արայի սարը

www.a-pdf.com

անաղարտ մի անձրև բռնած իր գլխին:
Անանուն գրիչ,
նաև այս ասա, այդ ինչպե՞ս ծաղկեցիր
մեր բաժին արեգակն ու սառույցը,
որ Լեռան մարմինը խաշվի քուրայում,
իսկ սրտի սառույցը չերերա անգամ:

Է.

Աղջիկները ակից էլ ջուր չեն տանում,
ես կանգնեցի ջարդված կժերի մոտ,
կանչեցի նրանց անուն առ անուն,
ձեռքիս ծաղիկներ, սրտումս՝ երգող մոգ:

Կանչեցի նրանց անուն առ անուն,
ասացի եկեք, տեսեք ի՜նչ ջուր է,
այս ջուրը Անի քաղաքն է գնում,
դե եկեք անցած օրերի միջից,
վարդարեք սիրո աղբյուրը կնգուն:

Կանչեցի նրանց անուն առ անուն,
ո՞վ իմ ձայնն առավ, ո՞վ ձայն տվեց ինձ
սարերի ցրտում, դաշտերի մուժում—
բայց այս ո՞ւմ լացած արցունքն է այտիս,
և այս ո՞ւմ խոսքն է շուրթիս բողբոջում:

www.a-pdf.com

Ը.

Ես անցնում էի քարերի միջով,
մի քարը տուն էր՝ ծաղկի պես բացված,
մեկն ավերակ էր՝ վրան արյան քող,
քարը քարին հանգ՝ թեթև, սրբատաշ:
Ես տեսա մարդկանց կիպ կպած իրար,
ուս ուսի տված սարը շուռ տալիս,
մարդը մարդուն հանգ, մարդը սարին հանգ,—
օրն էր արևոտ, և աստված՝ բարին:

Թ

Ես տեսել եմ անձրևի լաց
ուշ աշնանը, դաշտերի մեջ—
փլվել էր նա խոտի մոխրին
ու լալիս էր գիշեր-ցերեկ:
Մի գեղջուկ մարդ ծեր, խորշոմած,
ձեռ ու ոտը՝ խսխտած սյուներ,—
բավ էր մի թույլ քամի, որ այդ
մարդ-տերևին առներ-տաներ,—
մի գեղջուկ մարդ սփոփում էր
նրան երգով «Վարար անձրև,
ինչո՞ւ եկար աշուն օրով,
խոտն հարություն հո չի՞ առնի,
ամառն ամբողջ խռով եղար,
բայց ես քեզ հետ հաշտ եմ էլի,
ես չեմ լինի եկող գարուն,
բայց դու, անձրև, գարնանն արի...»:

www.a-pdf.com

Ժ

Տարիքիս լեռը ելնելիս
քայլ-քայլ, երակ-երակ
ես հասա մի օր քաղաք Երևան՝
մեր սիրո պես դրված պատմության բաց,
կանաչսիրտ դաշտում,
մեր հրաշատես տեսիլքների մեջ,
մեր ամենանուրբ խոհերի խորքում:
Երկնից այնպիսի արև էր վառում,
որպիսին չունեն մեծ քաղաքները,
լոկ դաշտերն ունեն՝
ծաղիկ ու ցորեն երկնելու համար
և սարերն ունեն՝
ծաղիկ ու ցորեն խանձելու համար:
Բայց ինչպես մանկան
երակ-գոյությունն աղջկա ներսում՝
վակքի ու ծխի կարծրությամբ փակված
ձյութ-ասֆալտի տակ
խլրտում էին մանուշակները:
Այդպես էլ անցա մանուշակների շշնջոցների
ու փողոցների շփոթի միջով
գնացի քայլ-քայլ, երակ առ երակ...
... Մի մարդ շուկայի թոհուբոհի մեջ
գնում-գալիս էր՝ ձեռքին՝ մանուշակ,
դեմքին նստած էր պղնձյա փոշի,
մեջքին ճոճվում էր սրի ամրակապ,
իսկ սուրը չկար:

www.a-pdf.com

Ակիքը նրան մերթ հեռացնում էր,
մերթ ի հայտ բերում: Ես ճանաչեցի,
Արգիշտին էր նա, մեծապոր արքան,
որ Երևանի վարդագույնի մեջ,
մեկնում էր քայլ-քայլ
և մոտենում էր երակ առ երակ...

Ի.

Գնում եմ դարձյալ,
սակայն իմ ճամփան դանդաղ է շարժվում
երկրի վրա, ինձ տրված կյանքում
երբեմն իջնում է խորքը պատմության,
ոլորվում անցած փառք ու կորստի
խորխորատներով,
ապա վեր միտում դեպի երգերի ու աղոթքների,
լույսի ճառագման ակունքն երկնային:
Քանի շերտ ունի հողդ, Հայաստան,
և քո ժամի մեջ քանի տարի կա:
Մեր կյանքն էլ ահա, երևույթիդ պես
չի լինում ուղիղ, չափած ու գծած այսերկրային
կյանք:
Դրա համար էլ բնավ չիմացա
հողագործ հորս տարիքը ստույգ,
չիմացա նաև, թե ինչու բախտը
մերթ մոտենում էր շոշափելու չափ,
մերթ հապար տարով հեռանում ինձնից:
Քանի շերտ ունի հողդ, Հայաստան,
և քո ժամի մեջ քանի տարի կա:

www.a-pdf.com

Գնում եմ դարձյալ,
անցնում քո ճամփով դժվար ու խրթին,
երբեմն իջնում եմ խորքը պատմության,
ոլորվում անցած փառք ու կորստի
խորխորատներով,
ապա վեր միտում դեպի երգերի ու աղոթքների,
լույսի ճառագման ակունքն երկնային:
Դե պարգևիր ինձ քո շնորհը թանկ՝
ճամփորդիդ համար քո իսկ սահմանած
Դատն ու Ներումը:

www.a-pdf.com

ՄԱՅՐԱՄԵ

Ի՞ՆՉ ԱՍԱՑԻ, Ի՞ՆՉ ԱՍԱՑԻՐ

Ինչպե՞ս եկար, ո՞ւր էիր գնում—
բան չասացիր,
ձեռքիդ՝ ծաղիկ, շուրթիդ՝ ծաղիկ,
ես ի՞նչ ասի, որ մնացիր,
բան չասացի:

Մի ոսկե օդ գտա ճամփիս
ու քեզ սրտանց ընծա տվի:
Ես ի՞նչ ասի, որ վերցրիր,
ես ի՞նչ ասի, որ ժպտացիր—
բան չասացի:

Անձրև եկավ տաք ու անուշ;
տաք ու անուշ մեկ ողողեց,
ի՞նչ էիր կորցրել մութ գիշերով,
որ փնտրեցիր մի ամբողջ կյանք
իմ սրտի մեջ—
բան չասացիր:

www.a-pdf.com

◆

Բաց թող, ասացիր, վարդի թուփը,
բաց թող անձրևի թելերը բարակ,
աշխարհը մեծ է, ճամփաները շատ,
հույլերը՝ առատ, աստղերը՝ շողշող,
գնա, ասացիր, ուր էլ որ գնաս,
կունենաս երակ ու վայելք գերող:

Բայց վարդի թուփը ասաց՝ մոտեցիր,
աշնան միջից ասաց՝ մոտեցիր,
մոտեցիր՝ ասացին թելերն անձրևի,
ձյան միջից ասացին՝ մոտեցիր:

Բաց թող, ասացիր, ձեռքս բաց թող,
բաց թող պատրանքի թելերը նրբին,
անցիր այստեղից անցորդի նման,
ուրիշի այգով հմայված անցիր,
գնա քեզ համար, ուր էլ որ գնաս՝
կորուստը կորուստ է, գտածը՝ գտած:

Բայց քո ձեռքը ինձ կանչեց՝ մոտեցիր,
անցյալի միջից կանչեց՝ մոտեցիր,
մոտեցիր՝ կանչեց պատրանքը չքնաղ,
այս մեծ աշխարհի բոլոր ճամփեքից
և երակներից, վայելքներից տաք
ինձ քո՛ պատրանքը կանչեց՝ մոտեցիր...

www.a-pdf.com

◆

Արև էր, արև կանաչ-կարմիր,
իմ կյանքի վրա վարդերի ցոլք էր,
նրանից էր, որ աշխարհում կայիր—
բայց ես չիմացա, իմ սիրտը գիտեր:

Անձրև էր, անձրև երակի նման,
իմ ճամփի վրա մշուշ էր կիտվել,
դու եկար անցար տենդի պես գարնան—
բայց ես չիմացա, իմ սիրտը գիտեր...

ՄԱՅՐԱՄԵ

Աստծո դրախտ աշխարհում
մի ծաղիկ էր ծիլ տվել,
ո՞վ իմացավ՝ ի՞նչ ծաղիկ,
քան կծաղիկն՝ առավե՛լ...

Սիրտն ի բոլոր թունդ մեղր,
սիրո մեղր տնավեր,
ինչ սիրո խա՛յթ, սիրո դե՛ղ,
քան սիրո համն՝ առավե՛լ...

Բախտի շողք էր հոգեհան,
որ ցոլաց այս կյանքից վեր,
ի՛նչ շնորհ էր ինձ համար,
քան ողջ կյանքս՝ առավել...

www.a-pdf.com

Երնեկ նրան, ով հետո,
ցավիս պիտի դառնա տեր,
էն ի՜նչ ցավ էր, ի՜նչ մեծ ցավ,
քան բերկրանքը՝ առավել...

Աստծո դրախտ աշխարհում
մի ծաղիկ էր ծիլ տվել,
ո՞վ իմացավ՝ ի՞նչ ծաղիկ,
քան կծաղիկն՝ առավե՜լ...

ԱՅՍ ԱՄՌԱՆ ԳԻՆԸ

Այս ամառվա
ամեն պահը ոսկե հուլունք,
տաք, շողշողուն մի ոսկեշար,
մի ոսկեշար՝ քո վզի շուրջ:

Ինչ ամառ է, ինչ տապ ու միրգ,
շուրթիս վրա՝ հասուն ծիրան,
հենց որ լեզուս շարժեմ՝ քաղցրիկ
երգ է թափվում սրտիդ վրա:

Իմ աչքերին ամպ-հովանի,
քո ձեռքերում՝ աստղիկ ու վարդ,
մի ճամփա է, մի ճար է ինձ՝
անձրև-անձրև իջնեմ վարար:

www.a-pdf.com

Գուցե իրա՞վ անհնար է,
վայելքի մեջ մնալ այսքան,
ախր այսպես ծաղկած մի սեր,
ախր այսքան հասուն ծիրան:

Քանի աղբյուր հոսեց-գնաց,
դեռ կով, անուշ կանչում ես դու,
մի՞թե սիրո հրաշքն այս թանկ
պարգևել ենք մեկս մեկու:

Ինչ ամառ է, ինչ օր ու սեր,
կախարդանքի անխիղճ շրջան,
ափսոս, որ այս ամռան գինը
աշունն իջնի՝ նոր կիմանամ:

ՄԻ ԱՍԱ

Մի ասա, որ դու եկել ես,
ախր ես կա՛մ, կա՛մ...
որ եկար,
մի ասա, թե կյանքս դարձրիր
սիրո շրջան, ջրի հորդուն·
կանչ ու պտույտ ու մեղրի ձայն,
որ բերեցիր աստղերի շարժ
սրտիս վրա ու բախտիս մեջ:—
Թող վարդենին քո փոխարեն
բույրով խոսի,

www.a-pdf.com

թող աստղի աչքն ամպից ցոլա,
քո փոխարեն լույսով խոսի,
անցնի գարուն, ամառ, աշուն
ու մոռանամ ես իսկապես,
որ երբևէ դու չես եկել,
այլ եղել ես իմ կյանքի մեջ:

Մի ասա, որ պիտի գնաս,
թող վարդենին քո փոխարեն
խամրի հանկարծ,
աստղի աչքը լցվի ամպով
քո փոխարեն,
ու մի անխիղճ անձրև տեղա
սրտիս վրա ու բախտիս մեջ
գարուն, ամառ, աշուն,
հավետ
ու մոռանամ ես իսկապես,
որ երբևէ ես եղել եմ
քո կյանքի մեջ:
Մի ասա, որ պիտի գնաս,
ախր չկամ, որ գնում ես...

ԵՍ ԳՈՀ ԵՂԱ ՀԱՎԻՏՅԱՆՆ

Օրը՝ օրին,
օրը՝ օրին
իջնող պսակ ծաղիկների...
Ես գոհ եղա հավիտյանս

www.a-pdf.com

ինձ շնորհված լույսից, գինուց
և հույզերից և խոսքերից, -
որ ծաղկեցին իմ կյանքի մեջ
սիրո ուժով ու հաճույքով:

Որը՝ օրին,
օրը՝ օրին
իջնող պատրանք ծաղկաթերթի,
իմ այս բաժին աշխարհի մեջ
թե երգ եղավ՝
քո մասին էր,
ուրախ-տխուր՝ քո մասին էր,
կրակ եղավ՝
իմ այրվելն էր,
թեժ թե մարմանդ՝ իմ այրվելն էր:

Որը՝ օրին,
օրը՝ օրին իջնող փաթիլ,
օրը՝ օրին ծալ-ծալ բացվող
ձմռան խորքեր...
Ես գոհ եղա հավիտյանս,
որովհետև երապեց ինձ մի քնքուշ սիրտ,
և ուղեկցեց մի լույս-հայացք
հրաժեշտի անհուն տապով:
Ինչ որ թոշնեց իմ կյանքի մեջ,
թոշնեց միայն
սիրո ուժով ու հաճույքով:

www.a-pdf.com

ԱՂՋԻԿԸ

Աղջկա սիրտը կրակ ընկավ,
բոցը բռնեց աշխարհ,
մտավ ջուրը՝ ջուրը եփվեց,
ափից ելավ,
սուզվեց գարնան նախշերի մեջ,
գարունն եռաց, դարձավ ամառ,
դիպավ կանաչ մի սրտիկի,
խեղճ սրտիկին մաղվեց ծարավ
իսկ ինքն անցավ
երանելի խորշակի պես,
գնաց, գնաց լույս ու ստվեր
աչք ու կարոտ շաղած իրար:
Իսկ երբ եղավ, այնպես եղավ,
որ աղջկա տոթ աչքերից մի կաթ արցունք
ցոլաց ընկավ գիշերվա մեջ,
իր ցանած ողջ կրակները մեկ-մեկ մարան,
ինքը մնաց բոցերի մեջ
ախ, սիրելի և աննման՝
կրակե վարդ, կրակե սիրտ, կրակ արցունք:

ՀՈՒԼԻՍ

Ծիրանը վառվում է ծառին
հուլիսի տաք ոսկին վրան—
ով տեսնի՝ թող չերկմտի,
քաղի սիրով,

www.a-pdf.com

ինչ իմանաս, այսպիսի բան
մեկ էլ ե՞րբ է դեմդ գալու,
մեկ էլ ո՞վ է քեզ պարզելու
այսքան քաղցր սեր ու գորով:

Կարմիր վարդը աղջկա ձեռքին
բացվել է՝ փողփողուն կրակ՝
հրեշտակի համբույր վրան—
աստղի բան է,
պիտի քաղես՝ ձեռքդ արնես
և քաղելու կսկիծն զգաս
ու հրճվանքը,
թե չէ հոգիդ պիտի արնի
հավիտյանս:

Սա հուլիսն է՝ թռչող պարտեզ,
գործված կանաչ-կարմիր թելով,
կանաչ կարմիր խաբկանքներով:
Այս պարտեզը
մի անգամ ենք մտնում կյանքում,
լոկ մի անգամ,
երբ ծիրանն է վառվում ծառին
հուլիսի տաք ոսկին վրան,
երբ կարմիր վարդն աղջկա ձեռին
բացվում է՝ փողփողուն կրակ՝
հրեշտակի համբույր վրան,
երբ
ավաղ,

www.a-pdf.com

երիցս ավաղ,
երկմտանքն է մեկ պաշարում
լոկ մի անգամ,
հենց այս անգամ:

ՄԻ ՆԵՐԻՐ ԻՆՁ

Փուշ,
մի ներիր,
որ իմ ճամփին ես չտեսա
քո սրտիկը
քո իսկ սիրո փշերի մեջ,
ուր գնացի
չտեսա քո վառ աստղիկը
կախված ճամփիս:
Գիտե՞ս քանի բախտի աստղեր
ինձ լքեցին:
Փուշ,
դարձյալ դու մի ներիր ինձ,
որ քո ծաղկից չեմ քաղել ես,
որ չեմ առել քո խոսքերից,
դրա համար պատժվել եմ.
գիտե՞ս քանի-քանի ծաղկի
չհասկացա,
քանի սիրո կողքով անցա
չհասկացված:
Փուշ,
երիցս մի ներիր ինձ,

www.a-pdf.com

որ չեմ սրբել քո արցունքը,
գիտե՞ս քանի
անգամ է իմ ձեռքը արնել
ծաղկի այտին,
որքան հեռու է ինձ քշել
սիրո թավիշ արտասուքը:

ԵՐԵՎԻ

Երևի տուն էի գնում
ու ճամփիս քեզ հանդիպեցի,
երևի չասացի ոչինչ,
որ դու ինձ հետ քայլ արեցիր:
Երևի ձմեռ էր շուրջը,
ցրտից լալիս էին մարդիկ,
երևի աչքս ծաղկած էր,
որ ես քեզ կոչեցի ծաղիկ:
Երևի դու ես դեռ կանչում,
որ ունկս լցվում է երգով,
երևի այսպես էլ մնամ՝
նստած քարի, պաղ սրինգով:
Երևի... Ի՞նչ ասեմ, ախր,
այս երգն էլ այսպես եղավ,
մեր ճամփի պես մի քիչ ոլոր,
մեր սիրո պես մի քիչ շեղված...

www.a-pdf.com

ԿԱՆԱՉ ՕՐ

Կանաչ շշուկ, կանաչ անձրև
ու կանաչ սեր հեղված իմ շուրջ,
ես՝ ելման գետ, ոչ խոսք ունեմ,
ոչ ճանապարհ և ոչ կամուրջ:
Ելնում եմ վեր՝ սարեր, սարեր,
սարեր, սարեր իջնում եմ ցած,
ով ինձ տվեց այսպիսի սեր
ու այսպիսի համառ ընթացք:
Վարդն ինձանից պոկ չի գալիս,
հետևում է սրինգն անուշ,
ուր գնացի՝ խոցեցին ինձ
քնքուշ մի երգ ու մի սուր փուշ:
Հենց ձեռք պարկեմ գիտեմ իսկույն
անձրևը ջուր պիտի դառնա,
թե սիրտ պարկեմ, շշուկն, ավաղ,
ոսկե դաշույն պիտի դառնա...
Կանաչ շշուկ, կանաչ անձրև
ու կանաչ սեր հեղված իմ շուրջ—
ես՝ ինքս իմ մեջ ելման մի գետ,
նախշուն մի երգ ինձանից դուրս:

ԻՆՉՊԵՍ ԱՆՈՒՇ ՀՈՐԻՆՎԱԾՔ

Երկինքն ի վար
շողշող անձրև է կախվել,
ինչպես անուշ հորինվածք:
Ո՞վ էր դրել, տեր աստված,

www.a-pdf.com

կյանքս կանաչ պտույտում,
շուրթս՝ սիրո խոսքի մեջ,
որ ուր հասա՝ քեզ դարձա,
որ ինչ ասի՝ եղավ երգ:

Մի ձեռք, լուսավոր մի ձեռք,
վառվեց տավղի լարերին:

Ինչպե՞ս եղավ, չիմացա,
ինչպե՞ս եղավ, որ հանկարծ
կյանքը հագավ վառ ծաղիկ
ու հեռացավ քո քայլքով
գարնան փափուկ դաշտերից:

Մի ձեռք, լուսավոր մի ձեռք,
վառվում է դեռ լարերին:

Երկինքն ի վար
շողշող անձրև է կախվել,
ինչպես անուշ հորինվածք—
այսքան ճամփա գնացի՝
աշխարհն աչքիս չփոխվեց,
նույն պատկերն է հոգուս դեմ.
կյանքս կանաչ պտույտում,
շուրթս՝ սիրո խոսքի մեջ:

Մի ձեռք, լուսավոր մի ձեռք,
ինձ է կանչում տավղի խորքը սուլվելով:

www.a-pdf.com

ԼՈՒՍԱՍՏՂ—ՆՇԱՆԻՍ ՄԱՏԱՆԻ

Լուսաստղ— նշանիս մատանի,
քեզ ես եմ կորցրել
պաղ ջրերի ափին,
ջահել օրերիս,
երբ դեռ խոսք չկար ասելու,
երբ սերը դեռ կգույշ հայացք էր,
հույս ու շփոթմունք էր,
երբ դեռ տունս ջրերի վրա
խաբկանքի ճոճք էր՝
ջահելության թեթև երկինքը վրան:
Ես լսում եմ դեռ
քո կորստյան ոսկե կնգոցը
քարերի մեջ,
և այրում է դեռ հիշողությունս
քո կորստյան ոսկե փայլը:
Լուսաստղ— նշանիս մատանի,
ցոլա դեպի
արշալույսի վարդամատը:
Ինձ կարթնացնի դարձյալ սերը
փափուկ դաշտի մեջ,
որպեն կանաչ սիրի-սիրի
ու կկնքի սիրտս դարձյալ
անմեկնելի գաղտնիքներով:

www.a-pdf.com

ԱՇՈՒՆ

Աղջիկը կանգնեց խնձորենու մոտ
ու մի գիշերում խնձորը հասավ,
մի քաղցրություն, ախ, այնքան ծանոթ
գիշերը թաքուն աշխարհը առավ:

Այդ մի գիշերում ինչպե՞ս պատահեց,
ես այգուց ելա հեռացա այնքան,
որ ետ դառնալս կոչվի անպատեհ
և երգելս ինձ մնա սփոփանք:

Խնձորի բույր է օդի մեջ լցված,
խնձորի կարկի սուր ցավ է սրտիս,
այն գիշեր որքա՞ն անձրև տեղաց,
որ մի ամբողջ կյանք ջուրը տարավ ինձ:

Իմը խնձորի կարկն էր անամոք
և այն կարմանքը՝ թե ինչպե՞ս եղավ,
աղջիկը կանգնեց խնձորենու մոտ
ու մի գիշերում խնձորը հասավ:

ԽՆՁՈՐ ԵՍ ԿԱՐՄԻՐ, ԿԱՐՄԻՐ

Խնձոր ես, հասել ես՝ կարմիր, կարմիր,
նախշուն, սրսփուն քո ճյուղի վրա,
քեզ քաղելը մեղք է, չքաղելը՝ մեղք ավելի
այս կանաչ-շռայլ սիրո մեջ ամռան:

www.a-pdf.com

Խնձոր ես, հասել ես՝ կարմիր, կարմիր,
բայց քո ճյուղը քեզ այդ ո՞ւմ է պարկում—
գնալդ մեղք է, պահվելդ մեղք ավելի,
երբ կեսօր է ու արևը ինչ որ բան է ասում:

Խնձոր ես, հասել ես՝ կարմիր, կարմիր—
տես, աշխարհում քեզ փնտրում է մի շեղբ,
թեև գիտի՝ մեղք է քեզ չգտնելը,
իսկ գտնելն անշուշտ մեղք է առավել:

ՄԻ ԱՆՑՈՐԴ ՄԱՐԴ ԽՄԵՑ, ԳՆԱՑ

Ամառն անցնի՝ աշնան մի օր
կգամ ձեր տուն,
կասեմ՝ այսպես, տարին բոլոր
աշխատել եմ, բայց ապարդյուն,
իմ ծառերը միրգ չտվին,
իմ վակերին խաղող չեղավ,
կասեմ՝ անուշ մրգեր տուր ինձ
և խաղողով պատվիր մի լավ:

Բայց դու կասես՝ ուշ ես եկել,
միրգը պոկեց անցորդ մի մարդ,
իսկ խաղողը կարասի մեջ
եփվում է, որ գինի դառնա:

Ես կգնամ աշնան օրով
քո քաղցրությանն այնպես կարոտ:

www.a-pdf.com

Աշունն անցնի ձմռան մի օր
նորից կգամ,
կասեմ՝ այսպես, կյանքը անցավ,
մի գավ գինի ես չունեցա,
պատվիր դու ինձ դառը գինով:

Բայց դու կասես՝ ուշ ես եկել,
շատ ուշացած,
գինին եփվեց իմ սրտի մեջ,
մի անցորդ մարդ խմեց, գնաց:

Ես կգնամ ձմռան օրով
քո դառնությանն այնպես կարոտ:

Ի՞ՆՉ ԻՄԱՆԱՍ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ

Ջուրը գնաց,
արմատների, տերևների միջով անցավ,
նրա ետքից
ծարավների տեսքով ելան ծառ ու ծաղիկ
և հագեցան ջրի ձայնից:

Ջուրը գնաց...
Այն ի՞նչ եկավ ջրի տեղակ, ջրի նման
հորձանք տվեց
ու հոլովվեց ծարավների սրտերի մեջ
ջրի նման, ջրից ավել...

www.a-pdf.com

Դու գնացիր
ջահելության ոսկեդրվագ ճամփաներով,
մեղմ սահեցիր
բախտին անգամ մութ մնացած լույսերի մեջ—
ես գոհացա պատրանքներով:

Դու գնացիր...
Այն ո՞վ եկավ, քո փոխարեն ու քեզ նման,
դուռս բացեց.
բախտիս, գինուս ու երգերիս գգվեց անկուսակ—
քեզնից պակաս, քեզնից ավել:

Եվ ով գնաց,
և ով եկավ... Ի՞նչ իմանաս քանի անգամ
ե՛ս գնացի
ինչ որ մեկի բաց սեղանից ու բաց սրտից,
քանի անգամ սփոփեցի, սփոփվեցի
ու ապրեցի բախտիս, գինուս, երգերիս հետ—
դժբախտ մարդուց մի քիչ պակաս,
բախտավորից մի քիչ ավել:

◆

Կանչեմ,
անունդ ծաղկի հետ կանչեմ,
աշխարհի ոսկե երգ ու աղմուկից
գայթակղության գավաթներից կեկ

www.a-pdf.com

ես մի կողմ թեքվեմ, մի կողմ թեքվեմ ու
կանչեմ,
անունդ ծաղկի հետ կանչեմ:

Հյուսեմ,
անունդ ծաղկի հետ հյուսեմ,
չարչարանք լինի օր ու կյանքիս մեջ,
երակներիս մեջ՝ առավոտի լույս,
իմ ապրած բոլոր պահերն օրհնվեն,
ո՞վ ինձ այսքան սեր պարգևեց, որ ես
հյուսեմ,
անունդ ծաղկի հետ հյուսեմ:

Քաղեմ,
անունդ ծաղկի հետ քաղեմ
ու տանեմ ինձ հետ ձյուներից առաջ,
բոլորակ աստղի, սիրո հաճությամբ,
ինձ ու քեզ անհայտ քնքշության ձեռքով
քաղեմ,
անունդ ծաղկի հետ քաղեմ:

ԱՆՋՐԵՎԸ

Սիրո մեջ պակաս էր սարսուռը,
ես եկա, որ մի՞քիչ ահ բերեմ,
վարդերի կարմիրը դալուկ էր,
ես եկա, որ օծեմ համբույրով;

www.a-pdf.com

խամրած էր խոսքերի մեղեդին,
եկա, որ խոսքերին ոսկի տամ,
հողի մեջ մոլորված ինչ հունդ կար՝
եկա, որ լույս աշխարհ դուրս բերեմ:
Եկա ու աշխարհում քեզ գտա,
եկա ու քեզ գտա մոլորուն
և առած թնջուկիս մուժի մեջ
քեզ տարա ճամփեքով անծանոթ,
թե ինչ էր տվածս՝ չիմացա,
առածս սարսուռն էր քո սիրո,
քո սիրո ոսկին էր հրայրքոտ:

ԱՅՍ ՁՅՈՒՆԸ, ԱՅՍ ԵՐԳԸ

Աստղերից է այս ձյունն իջնում,
շատ է մաքուր ու շատ է պաղ,
այս թախծոտ երգն աշխարհ շրջած՝
աշխարհի մեջ ինձ էլ գտավ:

Կյանքը վարդ էր կրծքիդ վրա,
վարդ՝ քաղցրաթերթ քո շուրջբոլոր—
իմն արբունք էր, բժժանք ու տապ,
կանչ ու պատրանք, սլացք ու դող:

Լույսը առատ, բույրը առատ,
ներսդ՝ նեկտար, շուրջդ՝ մեղու,
իմը տաղ էր վարդի մասին,
բոլորին մոտ, վարդից՝ հեռու:

www.a-pdf.com

Կյանքը վարդ էր կրծքիդ վրա...
... Իմ ձեռքին փուշ, քո ձեռքին փուշ,
մեր միջև ցուրտ մի դեկտեմբեր,
գնալը՝ շուտ, մնալը՝ ուշ...

Այս ձյունն իջնում է աստղերից,
շատ է մաքուր, ախ, շատ է պաղ,
այս թախծոտ երգն աշխարհ շրջած՝
աշխարհի մեջ ինձ էլ գտավ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ

Վառվեց շուշանը առվի եզրին
սիրուց, անձկության հրից,
թերթերը բացեց, ծովացավ
քամու մեջ, անձրևի ու արևի...
Որտե՞ղ էր քո սիրտը, որտե՞ղ էր:

Վառվեց շուշանը լույսերի մեջ
հնչեղ ծիծաղով և լացով թաքուն,
կանգնել էր ահա պատրաստ՝ խաբվելու,
պատրաստ՝ հաղթելու, տրտմելու խորունկ:
Որտե՞ղ էր քո սիրտը, որտե՞ղ էր:

Վառվեց շուշանը առվի եզրին,
ծարավից այրվեց, ծարավից,
երապեց, փայլեց հապար պչրանքով
ու թռավ-գնաց իր բույրի թևին...
Որտե՞ղ էր քո սիրտը, որտե՞ղ էր:

www.a-pdf.com

◆

Աղբյուրը բխում է քարից
և կուժը չի լցվում—
կժի մեջ լցվում է ծարավ:

Ես ինչքա՞ն կանչեմ աշխարհում
ու երգեմ, երակեմ—
երգի մեջ լցվում է ծարավ:

Անձրև է, մշուշ է թափվում,
ես նորից ելնում եմ ճամփա—
լացի մեջ լցվում է ծարավ:

Այն ո՞վ ինձ ասաց՝ գնացի,
այն ո՞վ է շշնջում՝ եկա—
սիրո մեջ լցվում է ծարավ:

◆

Կամաց-կամաց
իջանք աստղերի քնքուշ գծերով,
խոտերի պսակով լուսնակարդ
և բլուրների մեղմիկ շարքով
իջանք-գնացինք:
Կամաց-կամաց
իջանք ջրերի ափով,
կեսօրվա եկրով նախշուն,

www.a-pdf.com

վարդերի ցոլքերով անցանք:
Կամաց-կամաց
անցանք տապով ու լույսով,
երկրային արծաթ ձայների միջով
և երկնային ոսկե լռությամբ անցանք
դեպի ցած, հեռուն:
Աստծո հրաշքն անսպառ էր,
անվերջ իջանք սրտից-սիրտ,
անցանք սիրուց-սեր
կամաց-կամաց:
Ոչ մի ճամփա չավարտվեց,
ոչ մի ծարավ չհագեցավ,
ինչ որ գտանք՝
գտանք հանկարծ, հանկարծակի,
ինչ որ կորցրինք՝
կորցրինք երկար,
կամաց-կամաց՝
աստղերն ի վար իջնելիս...
Մի՞թե մենք այնքան բարձրում ենք եղել,
որ այս իջնելը տևեց մի կյանք՝
կամաց-կամաց...

ԴԺՎԱՐ ՀՐԱԺԵՇՏ

Ես գնացի,— ասում եմ ինձ,— բարի գիշեր,
ես գնացի,— ասում եմ քեզ,— բարի գիշեր,
ինձնից ելած, քեզնից ելած՝ ես գնացի:

www.a-pdf.com

Լուռ բացում եմ մթան դուռը, լուռ բացում եմ
դուռը հոգուս, դուռը հոգուդ, դուռը հոգուս
և գնում եմ, և մնում եմ, և գնում եմ:

Արի մենք մի դառն ու կծու խոսք ասենք ինձ,
դառն ու կծու, նաև հարցնենք՝ ո՞ւր ես գնում՝
գինին լցված, կրակը վառ, գինին լցված...

Թող երկուսիս քաղցր ու խոնարհ պատասխան
տամ,
քաղցր ու խոնարհ— մի ոսկե օղ կորցրի մթնում,
գնամ փնտրեմ, իկուր փնտրեմ, գնամ փնտրեմ...

ՍԻՐՈ, ԵՐԳԻ ՑՆԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լուսնալույսի փրփրուն պահ էր,
սիրո, երգի, ջահելության
շփոթ տեսիլ,
երակների անուշ շարժ էր մոխրի միջից
դեպի թռչող կրակները,
քո պատկերը սափորի պես
թեքված՝ վերից հեղում էր ցած
վայելքի տապ...
Լուսնալույսի փրփրուն պահ էր...
Հետո անցավ կյանքիս միջով
սիրո, երգի ջահելության
ծարավ խորշակ—

www.a-pdf.com

ես կորցրի, անդարձ կորցրի
ծաղկած սիրտս
վարդենու ալ փշերի տակ,
բայց մնացի դարձյալ կապված
լուսնալույսի տեսիլքներով,
հովվերգության թելով նրբին,
հին ցավերի նոր հարությամբ:
Ես ինչ կորցրի՝ անդարձ կորցրի,
ես ինչ կորցրի՝ կորցրի միայն
սիրո, երգի ցնծության մեջ,
և ով մեկնեց՝ իմ կյանքի մեջ
երակ թողեց իր փոխարեն,
և ով մեկնեց ընծայեց ինձ
խելակորույս լողացող ջուր,
և մի նավակ հավետ անշարժ:

ԾԱՆՐ ՊԱՐ

Բախտի աստղերի քնքուշ ոսկեշար,
և սիրով տրված աստծո օր ու լույս,
ի՞նչ երջանիկ եմ, վերջապես եկար,
քեզ հետ եմ հիմա պարս պարելու:

Պարվիր քո ձեռքը, թող ջահ լինի ինձ,
գնամ, անց կենամ այս օր ու կյանքով,
գայթակղության վարար ափերից
և ջահելության վարդերից փողփող:

www.a-pdf.com

Իմ մյուս ձեռքը կբռնի, գիտեմ,
մի հին տրտմություն՝ քեզ նման քաղցրիկ
ու միշտ երեքով այդպես կօրորվենք,
իբրև երկուսս ենք, իբրև՝ առանձին...

Ձեռքիդ կլինի մի ոսկե խնձոր,
տաղով, շշուկով ես կուզեմ առնել—
ու քեզ հետ կգամ քո շարժ ու քայլքով,
ոչ քեզ հասկացած, ոչ ինձ՝ առավել...

ԱՄԱՌԱՅԻՆ ՌԻԹՄ

Աղջիկները երգեցին հասուն արտի մոտ,
խորհրդավոր ջրերից բախտի աստղերն ելան,
դողանջեցին նրանց երգում ոսկի օղեր՝
թանկ օրերի լույսը վրան:

Նրանց գլխին թափառեցին ոսկե ամպեր,
անկուսակ ու հորդ թոն տեղացին նրանց աչքին,
ոսկե դռներ բացվեցին մեղմ շշնջոցով
մութ գրկի պես գայթակղիչ:

Գյուղը թաքուն դիտեց նրանց իրանները
տղեկի նոր-նոր արթնացած սուր հիացքով—
վարդը պոկվեց, խոսքը քաղվեց, գինին ցոլաց—
ոսկե դաշինք, հրավառ տո՛ն...

www.a-pdf.com

Աղջիկները երգեցին հասուն արտի մեջ՝
սիրով գրկած մանգաղների արծաթ գոտին,
աղջիկները հասկեր էին, որ լաց եղան
իրենց՝ անհայտ, բախտին՝ հայտնի ցավերից...

ԱՇՆԱՆԱՅԻՆ

Գոց դաշտերում մառախուղի բացված ծաղիկ
և գիշերվա պսակ՝ լուսնի դողդոջ քարով,
մարգերի մեջ լուռ խշրտոց աշուն-խոյի,
ոսկեգեղմին ամռան պչրանք ու ձմռան դող:

Մի աղջկա սիրտ էր ծաղկում գիշերվա մեջ,
ա՜հ, լսեցի, ես լսեցի՜ ձայնը ծաղկման,
որ իջնում էր ինչպես գինու ցոլանքը կեկ
շրթունքներին նիրհած կյանքի, նիրհած օրվա:

Մի տղայի սիրտ էր հասել աշնան ճյուղին՝
թաքուն, անխոս, շշունջների սաղարթի տակ,
թևածում էր համն ամենուր լուռ, սիրելի...
Հավարամյա ծանոթ կսկիծ, ծանոթ բերկրանք:

Ո՞վ իմացավ, որ այդ գիշեր գոց դաշտերում
բախտի օրհնյալ թևերն էին բացվել սիրով—
լուսնի քարով մատանի էր, կանչ ու խոստում,
որ ցոլացին, անցան խռով, անցան խռով:

www.a-pdf.com

ԳՆԱՄ ՀԻՄԱ

Գնամ հիմա քո կանչն առած
պատրանքների սահանքներով,
ծիածանի կամարի մոտ
քեզ որոնեմ գույներն ի վար,
գույներն ի վեր, գույներն ի ներս
ու չգտնեմ:

Հետո գնամ, ինձնից գնամ,
մաշված ու նոր ճամփաներով,
հավար տարի հեռու գնամ,
քեզ մեղեդու տեսքով տեսնեմ
խաղիկների տնակներում
ու քեզ երգեմ:

Ու միամիտ լինեմ այնքան,
որ խաբվելս բախտ համարեմ,
որ երազեմ, թե ո՞վ արդյոք
ինձ կխաբի մի խնձորով,
որ ես լացեմ առեղծվածդ
ու գոհանամ:

ՀԻՆ Է ՍԻՐՈ ԱՅՍ ՇԱՐԺՈՒՄԸ

Ո՞վ է ցուցանում
խավարումի ու շնորհման
պահերը դարձյալ,
ոսկե ցանցը աչքի վրա,

www.a-pdf.com

ոսկե նետը սրտի մեջ:
Ո՞վ է դարձնում տագնապն այսքան թանկ:
Ո՞վ է խոստովանում,
որ խավարումի ու շնորհման
սահմաններն անցնելիս
ես կորցնում եմ քեզ
Հաճախ,
և գտնում եմ քեզ
Երբեմն...
Հին է սիրո այս շարժումը
և վաղնջական
որքան խավարը,
որքան շնորհը լույսի—
հարցրու մարդուն, որ գնում է անդարձ,
հարցրու մարդուն, որ տուն է գալիս,
հարցրու դռանը, որ բացվում է ամեն երեկո,
հարցրու դռանը, որ փակ է մեկընդմիշտ:

ՊԱՐԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Ի՞նչ փայլ ունի աղջկա կգեստը,
որ այնպես թանկ-թանկ պահվել է
պահարանում,
ամեն ժանյակ ու կարի վրան՝
հույսի նապուկ ծաղկաթերթ է:
Օրորվում է, սահում, թռչում
երաժշտության թևերի մեջ:

www.a-pdf.com

Լույսը մարեց: Զգեստի փայլը
նուրբ գծվում է մթան դեմքին
ոսկեվորիկ շառագույնով,
հայացքները վարդերի պես
շար են բռնել նրա կրծքին—
դու մեկն ընտրիր, աղջիկ, մեկը,
և քո հոգում սուպիր փութով...
Գուցե արդեն դու մեկնե՞լ ես
ինչ որ աստղի ճանապարհով,
քո զգեստն է դեռ լույս տալիս
մութ սրահում
և օրորվում, սահում, թռչում
երաժշտության թևերի մեջ
իմ հայացքի վարդը կրծքին
մեն-միայնակ:

ԵՐԳԻ ՈՒ ՔՈ ՄԻՋԵՎ

Ի՞նչ սահուն էր ու սայթաքուն,
ի՞նչ թափառում պարգևեց ինձ
երգի ու քո միջև եղած ճանապարհը:
Ես այն անցա արյան շարժմամբ,
որ գնում է դեպի սիրտը՝
երակների, արցունքների
սահանքներով:
Ես այն անցա ծաղկի շարժմամբ,
որ գնում է դեպի մեղուն՝

www.a-pdf.com

մեղմ լույսերի ու կարկուտի
կռվադաշտով:
Ես այն անցա ջրի շարժմամբ,
բայց հոսելով ակունքն ի վեր՝
դեպի ձյունը, ցուրտը, քամին,
հոգսը դեպի:
Բայց քո տեղում դու չկայիր,
երգ էր դարձյալ ու մեղեդի—
և ինձ համար երգի ցանցից
էլ դարձ չկա:
Ու գնում եմ ես երգից երգ,
ամեն հույսից ու մեղեդուց,
անցնող-դարձող ամեն ցավից
քեզ հարցնելով:

ԵՐԳ

Ես ապրեցի այս աշխարհի լույսի մեջ,
շուրջս՝ ծիածանի երփներանգ պսակ,
ջահելության ափից ինձ ո՞վ էր կանչում,
այն ո՞վ էր ճոճում վարդ ու թաշկինակ—
չէի տեսնում, չէի տեսնում:

Իմ բաժին աշխարհը շուրթերիս հասած,
շուրթերիս հասած՝ գավաթ էր գինու,—
դե խմիր, կանչեցին երգիչները սիրով,
դե խմիր, ցնծաց տարիքս ջահել—
խմում էի, խմում էի:

www.a-pdf.com

Անգամ ցավը, անգամ ցավը ինձ համար
հնչում էր որպես սիրերգի տող,
հմայված, երապող՝ ոսկե շառափում,
ավաղ, ես չէի որոնում Ոսկին,
չիմացա, որ ինձ արցունք էլ է պետք—
չէի լալիս, չէի լալիս:

Ես չգիտեմ հիմա, չգիտեմ իրավ,
թե ճի՞շտ եմ ապրել կորուստ ու երապ,
բայց գիտեմ՝ ինչ որ տեղ ապրում էր սերը
և չհանդիպեցինք մենք իրար բնավ...
Կորածն անդարձ եղավ, սփոփանքն՝ առատ—
սփոփվում եմ, սփոփվում եմ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Զվարթ, ջահել մի արև
անմահություն է քամում
Արարատյան օրվա մեջ:
Եկավ ահա մի երգիչ
ոսկե սրինգ շուրթերին:
Բայց դու թաղված, քնած ես
համբարձման տաք թերթերում,
ինչպես երգը սրտի մեջ:

Հիմա վիճակ կլինի
բախտի, սիրո, ցնծության,

www.a-pdf.com

երգիչն առած սրինգը
կմոտենա ջրերին...
Ու կկանչի քեզ այնքան,
մինչև սրինգը հալվի,
ոսկով լցվի աշխարհը:
Քեզ կկանչի հմայված,
աչքերը փակ լույսի դեմ—
ու չի տեսնի, թե ինչպես
դու դուրս կելնես տեսիլքից,
ինքը խորունկ կթաղվի
համբարձման տաք թերթերում,
ինչպես երգը սրտի մեջ...

ՊԱՏԿԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՐԲՈՎ

Մեր ճանապարհը այդպես էր անցնում,
ամեն ինչ պիտի հենց այդպես լիներ—
մենք գնում էինք ամառվա միջով
հասնող մրգերի տապով բռնկված,
սուր-սուր քերծերով, վվարթ, անպգույշ,
երբ կույս Վարվառը ելավ ընդառաջ
փետրախոտերի հորձանքի միջից՝
ոտքերին նախշուն քամիներ հագած,
ուսին՝ աղբյուրներ, կրծքին՝ մութ երկինք,
ձեռքին՝ սպնու ճյուղ արնոտ փշերով:
Քեզ կանչեց իր մոտ, կնստեց սիրապեղ,
գրկեց, փայփայեց, լացեց քրոջ պես,

www.a-pdf.com

ապա գորտվով հանեց սիրտդ դուրս
ու խոցեց պնու փշերով սուր-սուր:
— Դե հիմա,— ասաց,— գնա քո ճամփան,
սիրտդ կտոկա ամեն մի ցավի:
Ու մենք գնացինք առանձին, բաժան,
միմյանց դեմ լցված անհասկանալի
սիրով ու թախծով, թախծով ու սիրով:

Հետո ի՞նչ եղավ. ոչինչ չգիտեմ:
Պարզապես պետք էր մի բան հորինել,
որ միշտ ունենամ քո թանկ կորուստը
կյանքիս կանչերում, ցոլքերում շքեղ...
Ու թող հավատամ, իրավ, հավատամ
կույս Վարվառի այդ հայտնությանը սուտ,
թե մեր ճանապարհն այդպես էր անցնում,
ամեն ինչ պիտի հենց այդպես լիներ...

ՎԱՐԱՐ ԱՆՁՐԵՎ

Ախ, վարար անձրև,
խառն ու անուշ ձևերով,
որ դու չիջար հուլիսն ի վար,
որ դու չանցար իմ այրվող արտ ու ափով,
չտեղացիր իմ ձկների արծաթ խաչին,
իմ գառների ոսկե գեղմին,
ես քեզ ինչ ասեմ:

www.a-pdf.com

Ախ, վարար անձրև,
արձակ մակով, խենթ, ցնծալի,
փողոցների կայտառ երգը լեկվիդ վրա,
ծաղիկների լույսը աչքիդ—
ու ինձ ոչինչ չխոստացար,
ինքս իմ առաջ դարձա ծարավ,
դարձա կորուստ ու ափսոսանք
ինքս իմ առաջ—
ես քեզ ինչ ասեմ:

Ախ, վարար անձրև,
դու ե՞րբ անցար, ես չիմացա,
ամենալավ երգը տարար շուրթիդ վրա,
ամենահորդ սերը տարար քո սրտի մեջ,
ծաղկով, լույսով, ծիածանով
դու ե՞րբ անցար,
որ մի բան էլ ինձնից տարար,
ես չիմացա...

Կանչեցի՝ տերև՛, տերև՛,
երկինքը թոն տեղաց—
այն ի՞նչ ծարավ տեսա:

Կանչեցի՝ պսա՛կ, պսա՛կ,
աստղը ընկավ ծովին—
ջրի հրդեհ տեսա:

www.a-pdf.com

Կանչեցի՝ թերթի՛կ, թերթի՛կ,
խոնավ-ոսկի աշուն իջավ,
աստծո անուշ հայացք տեսա:

Կանչեցի՝ ձյունի՛կ, ձյունի՛կ,
կողքիս խորոտ ծաղիկ տեսա,
ավա՛ղ տեսա, ափսո՛ս՝ տեսա...

www.a-pdf.com

Ի ՊԱՀ ՄԱՅՐ ՀՈՂԻՆ

ԱՍՏՂ ԵՎ ԱՍՏՂԱՓՈՒՇ

Փշի վրա աստղի ցոլանք—
և աստղափուշ իմ կյանքի մեջ:

Քարի սրտում ծաղկի դաջվածք—
և ոսկու փայլ կորստյան մեջ:

Անձրևի կարկ առվի սրտին—
իրար անհաս քաղց ու հագուրդ:

Աշնան խայտանք և ձյան սարսուռ—
սրտի-խոհի հին դավ ու սեր:

Զմռան աշխարհ, լռած կանչեր—
սիրո շարժում, վայելքի տենչ:

Աստղերի պարս, աստղոտ աշխարհ—
և աստղափուշ իմ կյանքի մեջ:

www.a-pdf.com

ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինձ բախտ վիճակվեց աչք ու սիրտ բացեմ
շողակն հունիսի այս այգի առաջ—
աշխարհի վրա ծաղկած արեգակ,
խաղաղ ճամփաներ, հույս ու թռչնականչ:
Լույսի շարժումից ունկերս լցվեց
երկրային շքեղ, շքեղ մեղեդի,
ջրերի կանչից՝ պաղ, անապական
սիրտս խլրտաց, դարձավ մի ծաղիկ—
ես տեսա սայլը Մասսից իջնող,
գիլ-գլոր իջնող, անիվներն արծաթ,
բոլորված սնդուս-մանուշակներով:
Խաղաղ առավոտ և ծիրանի լույս,
սիրո, երակի փրփուրով պատված
սիրելի՛ աշխարհ:
Սիրելի աշխարհ,—
ես տեսա երգող սերովբեներին
ճյուղերի վրա, ձորերի խորքում,
ջրի ու հողի եզերքների մեջ,
նրանք սիրառատ օրհներգում էին
և ծաղկին թռչնած, և ծաղկին բացվող,
և որսված հավքին, և ճախրող հավքին,
հնչում էր կվարթ, հասնում ամենուր
հրավերքների քաղցր մեղեդին:—
Ես տեսա ինչպես խոտ ու կենդանի
ամեն կողմերից եկան հմայված,
որ ապրեն Տոնի արբեցումի մեջ,
ճաշակեն իրենց շնորհված բախտը

www.a-pdf.com

ու գգվեն իրար ներման, հրճվանքի
արցունք-հայացքով:
Եվ այս առավոտ առաջին մարդը,
որին ես տեսա՝ Նարեկացին էր:

ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ՈՍԿԵ ՓՈՒՇԸ

Շուրջս աղմուկ է, հապար տարվա կանչ ու անդորր,
հրավերի ու մերժումի անտես շղթա—
հնչեցնում է պահնորդս իր փողը դողդոջ
ու սիրերգ է թափվում նրա փողից արծաթ:
Քարն է փափկում պատանյակի հույզից շքեղ,
նուրբ ու փխրուն, աստվածահաճ, երանելի...
Ես չէի ուզում ամենևին այդպես լիներ,
բայց սիրերգն իմ սրտին ավաղ դուր էր գալիս:

Այս ժխորում հապարամյա դու լսո՞ւմ ես
հին արքայիս ծանր խոսքը երկաթագիր,
սիրտս ծակեց ոսկե փուշը անգթորեն
շողշող փուշը սիրո, երգի, սատանայի,
ոսկե փուշը իմ փողհարի սիրտն էլ ծակեց,
սիրերգ դարձան մարտակոչերս կատաղի...
Ինչպե՞ս եղավ, ի՞նչ կատարվեց, չհասկացա,
կյանքս հանկարծ կիսվեց մեկեն երկու մասի—
իմ վինավառ, բոց տարիքը՝ նժույգն հեծած
ո՞ւր հեռացավ հաղթանակի աստղն ուսին:
Իսկ այս մեկը՝ հասուն, սակայն վհատ տարիք,
մնաց փակված անձկության պաղ անձավներում,

www.a-pdf.com

մեկնած ուժիս, փառքիս ձայնին լուռ ունկնդիր,
հպարտության շղթաներով կարկված ամուր:

Հիմա արդյոք կա՞ աշխարհում ոսկե փուշը,
արքայասպան փուշը նենգ ու գայթակղիչ,
նա բուրում է, ունի շողշող պսակ լուսե,
սակայն սրտում խոր դաջվածքը սև դժոխքի:
Նրան հողը չի կյանք տալիս և ոչ ջուրը,
նա աճում է գաղջության մեջ կեղծ խոստումի
և գրկի մեջ թավշյա սիրո և խոսքերում,
ախ, խոսքերում նուրբ ու մթին, նուրբ ու մթին:
Նա կմեռնի հենց արմատը հողին առնի,
նա կմեռնի, հենց որ ջուրը ցողի նրան—
հողում, ջրում նահատակաց անմահ լույսն է՝
չի հանդուրժի ոչ հին և ոչ նոր խարդավանք:
Գտեք փուշը, քաղեք փուշը ուր էլ լինի,
իմ պահնորդը թող ապատվի իր մեծ պատժից,
ես կմնամ որպես արքա-վոհ իմ փշին,
որ իմ փշով երբեք ոչ ոք էլ չխոցվի:

ՄԱՆՈՒԿ ԱՐՔԱՅԱՍՊԱՆԻ ՁԱՅՆԸ

Արտաքսման լանջին կա մի գերեզման, ուր ըստ ավանդության թաղված է մանուկ արքայասպանը: Եվ ով հանկարծ փորձի իմանալ այդ շիրմի գաղտնիքը, կհայտնվի ահեղ վիշապը՝ մարգարտահուռ թագը գլխին:

Արդեն քանի դար փակված եմ ամուր
առասպելի մեջ: Ու հնար չկա

www.a-pdf.com

ահեղ վիշապի աչքից փախչելու:
Ախր այն ո՞վ էր ինձ կարգեց արքա:
Ո՞վ ինձ թագ տվեց, որ թիթեռների
պարս էր ոսկեղեն, ցանուցիր եղավ...
Ո՞վ ինձ գահ տվեց, այնպիսի մի գահ,
որ լոկ նինջ բերեց օրորոցի պես,
որ գայիսոնս դառնար նուրբ կակաչ՝
իմ ձեռքից ընկներ, հավիտյան ընկներ...
Այն ո՞ւմ աստվածը ինձ թողեց մանուկ
և այս աշխարհի դավ ու կռվի մեջ
ինձ վրկեց կռվից, դավից, թշնամուց,
հաղթել-պարտվելու մեղրից ու թույնից
և հավետ պատժեց մանուկ մնալու...

Ես սեր եմ, սեր եմ, միամիտ երակ,
մանուկ արքա եմ, պատիժս սերն է...
Ո՞վ ինձնից վանեց նժույգս կայտառ,
նահատակության թամբը ոսկեթել
և ինձ պարգևեց այս կյանքը անմահ:
Բայց անմահությամբ հենց մահ գտա ես՝
առասպելի մեջ փակվելով ընդմիշտ,
աչքս պատմության ջրերին հառած,
լոկ ջրի կայտառ խաղին մասնակից...

Ես սեր եմ, սեր եմ, միամիտ երակ,
հավերժ մանկությամբ վարկված եմ ամուր—
ողջ արքաներից ես՝ դժբախտ արքաս
կրկնակի դժբախտ՝ արքա և մանուկ:

www.a-pdf.com

Ի ՊԱՀ ՄԱՅՐ ՀՈՂԻՆ

Մի ոսկե թռչուն թռավ քո բերանից—
էդ Սասնա բարբառն էր խորոտ-մորոտիկ,
որ թևեց դեպի երկինք, դեպի աստված,
քո թոռան թոլ սրտին ու լեզվին
թողած մի ողողանջ:

Քո սրտից ընկավ մի մութ որձաքար,
ընկավ ոտքիդ դեմ, դարձավ քեզ արգելք,
քո ոտքերը՝ երկու ճամփա հեռվից եկած
ախ, խճճվեցին թուփ ու ծաղկի մեջ—
ախ, հեռվից եկած:

Մի աղբրակ պայթեց Արագածի աչքից,
քո արցունքն էր, քո մշուշն էր, քո գինին,
մի հին սեր քեզ կանչում էր, աշխարհից հանում,
իսկ մի ցավ, որ քեզ միշտ պահեց կենդանի
այն ի՞նչ էր պատմում:

Քո սրտից ծիլ տվեց ծիրանի մի ծառ,
քո. պատրանքն է՝ պսակին լույս ու ոգի—
քո թևերը՝ մի հոգնած բահ ու հրացան,
իրար գրկած ահա գնում են խաղաղ
ի պահ մայր հողին:

www.a-pdf.com

ՓՈՔՐԻԿ ՀՐԱՇՔ ԱՆԿՅՈՒՆԸ

Այն կա աշխարհում ամենուր,
հույսի մեջ, արցունքի, բարևի
և ցնծության մեջ անանուն
և վեճի մեջ և լքումի:
Կա այդ անկյունը փոքրիկ՝
ողողված աստծո լույսով,
դուռը դեպի դրախտ բացված,
պատուհանը բախտին նայող:
Այնտեղ կղզումն է բնակվում
և լույսի հատիկն հարության,
որ մեռած անցյալն է դարձնում
ճանապարհիդ արթուն վկան:
Այդ փոքրիկ անկյունից հաճախ
իջնում են աշխարհի վրա
մեր հոգու երգիչներն անտես,
որպես աստղի փափուկ կրակ:
Նրանք ծաղկած ճյուղ են տանում
ձյունահողմից ընկած ծառին
և ջրին տանում են ծարավ,
որ նա էլի, էլի հոսի...
Այդ փոքրիկ, հրաշք անկյունից
ծորում է մեղր սիրո խայթի՝
մեր ապրած օրվա թերթերին
և շուրթին մեր գալիք քաղցի:

www.a-pdf.com

ԱՆՈՒՂՂԵԼԻ ԵՄ

Ինձ ինչ ուզում ես ասա՝ անուղղելի եմ,
ես երակից բացի թռիչք չունեմ ուրիշ,
ապրածս հեքիաթը այս կյանքն է, որ կա,
ինչ քայլքով գնում եմ դեպի ծաղկումս թավիշ,
նույն քայլքով իջնում եմ աստիճանով անկման:

Էլի նույն ձայնով եմ կանչում քեզ, որ չկաս,
դեռ կարծում եմ դու քույրն ես ծաղկի ու
արցունքի,
դեռ մեր միջև կա աստծո քաղցր առեղծված,
քեզ կորցնելուց հետո անգամ դու ինձ համար,
դու ինձ համար հավիտյան սիրով գտնված:

Էլի միամիտ եմ, կխաբվեմ ես շատ շուտ,
միայն թե ակնարկ լինի, ակնարկ մի թեթև,
կհալվեմ լուսնի շողից ու երգերից սուտ,
էլի կփորձեմ ծովը մաղով դատարկել,
միայն թե ակնարկ լինի, ակնարկ մի թեթև:

Ինձ ինչ ուզում ես ասա, անուղղելի եմ,
ուշանում եմ դարձյալ ծիծաղից, հանդեսից,
բայց տխրում եմ կարգին ու կարգին ցնծում եմ,
չսովորեցի բնավ տեղը գրպանիս,
հոգով եմ վճարում պարտքիս դիմաց ամեն:

www.a-pdf.com

Հոգով եմ վճարում պարտքիս դիմաց ամեն
և վճարներից ինձ լոկ երգեր են մնում,
դեռ կարծում եմ պիտի ծնկել ծաղկի դեմ
և աստղեր որոնել ցերեկվա երկնքում...
Ինձ ինչ ուզում ես ասա, անուղղելի եմ:

ԼՈՒՅԿԻՆ

Ինձ այրիր մթի դեմ, սևի,
թող վառվեմ իմ լույսով, կրակով,
որ ի վերուստ տրված է ինձ
իբրև ապրելու մեծ շնորհ:
Թող այրեմ գիշերվա շուրթը,
վրան՝ համբույր պագշոտ ու մութ
և խոսքն այրեմ, ոսկե խոսքը,
որ չի բերում տագնապ ու հույզ:
Ցնծության դեմ վառ տոների
կանգնեմ մենակ ամենևին,
կամ կմարեմ մի հեղգ շնչից,
կամ հրդեհս պիտի ծաղկի:
Հետո արդեն ողջը մեկ է՝
թե մեկնից ով ում կհիշի,
դո՞ւ, որ կրակս դարձրիր կյանք,
ե՞ս, որ կյանքս դարձրի մոխիր:

www.a-pdf.com

ՁՅՈՒՆԸ

Տեղացի փափուկ ու անուշ
խոր ու խորունկ երանությամբ,
թեթևորեն այնպես անհոգ,
ինքս ինձնից առաջ անցած,
ինքս ինձնից ետ մնալով:
Չկար քամի ինձ ուղեկից,
չկար կայծակ, չկար սոսկում,
ես երկնքի տեր-տնօրեն,
դեմս սիրո գրկի նման
բացված աշխարհը սիրելի:
Ինչե՞ր տեսա իմ ձմռան մեջ,
քանի՞ շնչից սառույց դարձա,
քանի՞ շնչից՝ ծաղկի պատրանք:
Ո՞վ ինձ տվեց գույնն այս ճերմակ,
որ ամեն ինչ հոգուս դաջվի:
Ինչե՞ր տեսա իմ ձմռան մեջ...
Բայց առավել կարմանալին
իմ հալվելն էր, ջուր դառնալն էր:
Այդ ի՞նչ կյանք էր՝ ճամփա էր կարճ,
որ շուտ անցա աչք չթարթած,
այդ ի՞նչ կյանք էր՝ միրգ էր հրաշք
հալվեց լեկվիս՝ սիրտ չհասավ...
Հիմա այսպես ջուր եմ դարձել,
ամպով լցված կռունկի աչք,
առաջս՝ հուշ, ետևս՝ հուշ,
ես հոսում եմ ու չգիտեմ՝
գնացողն եմ, թե եկողը:

www.a-pdf.com

ԵՐԱԶԻ ՊԵՍ

Ես, որ աճեցի
որթատունկի հետ,
ապրեցի մի կյանք կանաչ շեշտերով,
տաք անձրևների շոյանքների տակ,
պաղ անձրևների սարսուռների մեջ,
անցնող, դարձող եղանակների
վարկով ու սիրով:
Որթատունկի հետ
ես ծարավեցի՝ կանգնած նույն քարին,
նույն կրակի մեջ,
մենք նույն հայացքով նայեցինք երկինք,
նույն չափ ու հանգով ասացինք իրար
սրտալի խոսքեր:
Եվ ձմռան մի օր ձյունն ինձ շշնջաց.
— Տեսե՞լ ես, կողքիդ ապրում է մեկը
երապի նման, շնորհի նման
օրհնության, բախտի:
Նրա շնչից ես քնքուշ կդառնամ,
նրա սիրուց ես քո աչքերին տաք
արցունք կդառնամ:
Իսկ մի կյանք հետո
ձյունն ասաց նրան.
— Ապրում էր մեկը, ապրում էր կողքիդ
երապի նման,

www.a-pdf.com

մի՞թե ես նրան տարել եմ արդեն,
մի՞թե ես նրա շնչից քնքշացա,
մեղմացա այնքան,
որ քո աչքերին դառնում եմ արցունք:

ՉԷ՞ ՈՐ ԴԱ ԷԼ ՇՆՈՐՀ ԷՐ ՄԵԾ

Զյունոտ էր ճամփան
իրիկվա մեջ խորացող—
ես գնացի
քաղցրիկ կանչին ունկնդիր,
ասացի մնաս բարով
իմ սիրելուն,
ասացի մնաս բարով նրան,
որ հալածում էր ինձ
ու գնացի՝
հմայված, երապուն, անձանձիր:
Ինձ ուղեկից էր միայն
ընկնող աստղերի լույսը
հորդ ու սիրալեղ,
սակայն դա էլ ճանապարհ էր,
սակայն դա էլ շնորհ էր մեծ:

Ես անցա մի կյանք
ոսկի արտերի միջով,
ցորենի քիստը ասղտեց հոգիս,
անցա վարդերի ու ձյան միջով,

www.a-pdf.com

անցա երկրով ու երկնքով,
ես մի ամբողջ կյանք
ճանապարհ անցա և մոտեցա քեզ, քեզ,
որ միշտ եղել ես կողքիս:
Հիմա իմ առջև մի հատիկ դուռ կա՝
քո սիրտը,
որտեղից մի ամբողջ կյանք
իբրև առեղծված, հմայում, խաբկանք
հնչում էր քաղցրիկ կանչը:
Հիմա իմ առջև մի հատիկ դուռ կա՝
քո սիրտը՝
բայց չեմ կարող բախել
ու հանգիստ եմ
այս երկար թափառիկ ճանապարհից—
չէ՞ որ դա էլ ճանապարհ է,
չէ՞ որ դա էլ շնորհ է մեծ:

ԴԱՐՁՅԱԼ ՓՈՒՇՆ Է ԽԼՐՏՈՒՄ

Բանաստեղծություն գրելուց հետո
աշխարհում մի բան փոխվում է իրավ—
ծարավ ծաղիկը գտնում է ջրին,՝
աստղը ցոլում է ճակատին սիրո,
հողմը փակվում է անդունդների մեջ,
և թույլ ու վհատ ծիլերին բոլոր
ճակատագիրը ժպտում է հանկարծ
առաջին անգամ, գուցե և վերջին:

www.a-pdf.com

Աշխարհի ամեն մութ անկյուններից
խարդավանքներին, ծեսերին բոլոր
իջնում է շքեղ, հավվագյուտ անձրև,
լվանում, պարկում աչք ու ճանապարհ:
Հավվագյուտ մի լույս, հավվագյուտ մի սեր
պաշարում են քեզ հարապատորեն
երկիր-երկնքի մեղմ ռիթմերի մեջ,
երկիր-երկնքի բարդ հյուսվածքներում:

Բայց քո մեջ դարձյալ փուշն է խլրտում,
և քեզ թվում է միամտորեն,
թե արդեն գիտես տեղը խայթոցի
ու քո կոիվը հաղթել ես արդեն:
Բայց քեզ երբևէ ոչ ոք չի ասի,
որ այդ տանջալի փուշն ուրիշինն է
և պիտի այնքան ծակի քո հոգին,
քանի դեռ այնտեղ ծնվում են երգեր:

Բանաստեղծություն գրելուց հետո
աշխարհում մի բան փոխվում է իրավ,
բայց ծաղիկն էլի մնում է ծարավ,
աստղն այրվում է ճակատին սիրո,
թեպետ բացվել են դռները ամոան,
թեպետ ամեն ինչ թավիշ է դառել,
թեպետ ամեն ոք իր ճանապարհին
փնտրում է, կանչում, արտասվում՝ սեր, սեր...

www.a-pdf.com

◆

Երկրի չքնաղ վարդերի մեջ
ինձ համար կա լոկ երկու վարդ—
մեկը պիտի ընծա տանեմ,
իսկ մյուսը թփին մնա:

Սրնգի տաք շուրթի վրա
երկու խոսք կար՝ հույլերով լի—
մեկն ասվեց մեր հանդիպմանը,
իսկ մյուսը մնաց գաղտնի:

Երկու ճամփա կար ափիս մեջ,
մեկն ինձ ամուր կապվեց հավետ
ու խաճեց ոտքերս իրար,
մյուսն անցավ աստղերից վեր:

Աստված տվեց երկու ծարավ,
երկու ծարավ ու մի պուտ ջուր,
մեկը հոսեց գետերի հետ,
մեկն ինձ մնաց կպած ամուր:

Մի վարդ, մի խոսք, մի ճանապարհ
և մի ծարավ՝ երկնի շնորհ,
բայց առավել հարուստ եղա
ինձ չտրված ու չեղածով:

www.a-pdf.com

ՁԱՅՆԸ

Մի ձայն էր կանչում հեռվից
խոնարհ, երգեցիկ
և դուռս բացվեց կամաց,
ես դուրս ելա, գնացի:

Ձայնը քարից էր գալիս:
Քարտաշի մուրճն ընկած էր գետին:
Քարտաշը չկար:
Սարեսար ընկած ծաղիկ էր փնտրում:

Ձայնը ծաղկի խորքից էր գալիս—
ծաղիկը թողած բույր ու պսակ,
անցել էր գետի ափով,
բլրակով, հովտով,
անցել էր ամռան օրերն այն կողմ՝
իրեն քաղող ձեռք էր փնտրում:

Ձայնը ձեռքիս միջից էր գալիս,
որ դողաց քո ուսին,
դողաց այս երգը գրելիս
և ցուրտ քամու առաջ
կամաց փակեց դուռս,
կամաց **փակեց սիրտս:**

www.a-pdf.com

ԿԱՆՉ

Արագածը թեքվեց հողին,
խոր կապույտից, երկնի լույսից
թեքվեց հողին, ասաց՝
արի, հասմիկ ծաղիկ,
իմ տրտմության մութ օրերից,
իմ ցրտության խուլ ափերից
խայտա, արի:
Թեպետ նուրբ են քո թերթերը,
սիրտդ լի է սիրերգներով,
բայց կարկուտի կողքին պիտի
գոտիդ կապես կանաչ-դեղին,
կանաչ-դեղին օրդ պարպես
քամու թևին,
բույրիդ առաջ, լույսիդ առաջ
կանգնես համր ու անհաղորդ
ու սպասես երկար, դժվար,
համառ, անխոս, գուցե
մի կյանք, կամ ավելի,
մինչև որ գա քաղցրիկ մեղուն:
Մինչև որ գա քաղցրիկ մեղուն
քամու միջով ու անձրևի
մութ վարկերով՝ քեզ համար գա,
հավար ու մի հայմ ու բույթից,
շողից, ոսկուց գայթակղիչ
անցած՝ այդպես, գուցե մի կյանք
կամ ավելի ճամփա անցած
քեզ համար գա:

www.a-pdf.com

ԽՈՐ ՁՄՌԱՆ ՄԵՋ

Ձյուն է թափվում ցած,
ծանր կապարե ձյուն է թափվում ցած
և գիշերն ի վար և ցերեկն ի վար,
հետքս կորել է մղձավանջի մեջ,
որ, հոգի, ես եմ հյուսել քո բոլոր:
Գարնան հուշն հիմա կյանքի պես բան է,
կյանքի պես թանկ է, ով պարգևի ինձ՝
ես ձմռան միջից դուրս կգամ իսկույն,
որ նրան ծաղկած, նախշուն սիրտ տեսնեմ,
բույրի մեջ տեսնեմ, լույսի, պսակի,
սիրո, ցնծության ափերում կանգնած,
իր բախտի աստղին լույս տամ անհնար,
ով որ պարգևի գարնան հուշն հիմա...
... Ու տես ինչ եղավ, տես ինչ պատահեց.
իմ ապրած բոլոր սերերի միջից
այս ձյուն-ձմեռվա սայթաքուն ճամփին,
իմ անձայն կանչին, իմ թախծությանը՝
քո սիրտն է կնգում, իմ քաղաք ծաղիկ:
Ես ձմռան միջից դուրս կգամ հիմա,
բայց էլ ո՞ւմ պիտի տեսնեմ նախշունսիրտ,
սիրո, ցնծության ափերում կանգնած,
երբ որ ոչ դու՝ կաս, իմ քաղաք ծաղիկ,
և ոչ էլ ձեռքս՝ քեզ իր մեջ պահած:

www.a-pdf.com

Մի՞թե այնքան շատ գանձ եմ կորցրել

Աշնան ակացիայից տերևներ ընկան
և երկիրը անկումից ցնցվեց:

Լռությամբ, թեթև սահեց պատկերդ
անցյալիս ոսկե շրջանակից ներս:

Մի՞թե այնքան շատ գանձ եմ կորցրել,
որ անվերջ երգ է հոսում իմ սրտից:

Այն ե՞րբ էր, իջա ցնծությամբ հողին,
ո՞վ ծիածանով աչքերս կապեց:

Կուրություն տվեց ինձ երանելի,
գույնի, երապի՛ հավիտյան աղերս:

Ցոլացի, անցա շատ աստղեր այն կողմ՝
հապար երապի մասնակից ու տեր:

Բայց իմ աստղն ինձ միշտ եղավ անհաս,
մի երապաչափ հեռու ինչ որ տեղ:

Ու գաղտնիք մնաց, թե մեր երկուսից
ո՞վ էր ճամփորդը և աստղն ո՞վ էր...

Եվ ինձ այնպես էր թվում երբեմն,
թե ինչ որ մեկն էլ ապրում էր կյանքս,

www.a-pdf.com

Լույսի, պատրանքի սահանքների մեջ
ինձ հետ ըմբոշխնում բերկրանք ու կսկիծ:

Մի՞թե այնքան շատ գանձ եմ կորցրել,
որ անվերջ երգ է հոսում իմ սրտից:

ԱՆՑՎՈՐ ՋՐԻ ԱՓԻՆ

Օրը բացված ճերմակ ծաղիկ,
պսակի շուրջ՝ սիրո ցոլանք,
երկիրն ի վար, երկինքն ի վեր
լույսի բողբոջ, աստծո հայացք:
Ջուրն է հոսում, գնում վարար,
ճերմակ ծաղկի՝ պատկերն իր մեջ.
ջրի ափին մեկը երգեց՝
անցվոր աշխարհ, անցվոր աշխարհ:

Երկու թռչուն ճերմակաթև
ճախր տվին եթերի մեջ,
լույսը աճեց ալիք-ալիք,
հեղեց-ծածկեց աշխարհն ամեն—
մի մարդ պիտի անցներ-գնար,
մեկն այս կյանքից գալու էր ներս.
ջրի ափին մեկը երգեց՝
ես եկել եմ, ինձ՝ լույս ու սեր:

www.a-pdf.com

ԱՆԹԱՌԱՄ ԾԱՂԻԿ

Անթառամ ծաղիկ,
ճակատագրիս մեջ քո մասին էլ կա...
Այն, որ գրված է՝ բուրում է մեկը
ամառ ու ձմեռ, հավիտենական,
որ երգ է շրջում, գլխին պսակ է,
որ չի սպառվում ռունգների տապից,
ցավից չի լալիս, մահից չի խորշում,
որ նա աճում է քարերի սիրուց,
իսկ արտում՝ քարի և ոչ մի նշույլ՝
հենց դու ես, որ կաս, Անթառամ ծաղիկ:

Ես նա եմ, որին տանում է քամին
ձմռան մոռացման ափերը աղի,
բերանս խցած լռությամբ տտիպ...
Ես նա եմ, որը իր կյանքում անծիր
փնտրեց արտերում ոսկեղեն դռներ,
հաճախ շփոթեց ճամփան ետդարձի
ու դրախտ կոչեց ամեն փշոտ տեղ:
Ու ինքը հաճախ խճողեց իր շուրջ
այս կյանքի գծած թելերը հստակ
և ինչպես մեղուն իր նյութած մեղրում
խճճվեց որպես տեր ու նահատակ:
Հենց նա եմ, որ կամ:
Հիմա և ընդմիշտ օրհնյալ ես աշխարհ,
որ վայելում եմ քո հրաշքը կարճ,
որ անթառամը գնալու է հար
ինձանից հետո և ինձնից առաջ:

www.a-pdf.com

ՀԱՎԱՏԱՄ

Հավատամ, սիրով հավատամ,
որ անձրև չէ թափվում վերից,
այլ արցունքդ է ինձ պսակում
աշնան նախշուն ճամփաներին,
որ խոսքեր չեն երկար, դատարկ
մահվան նման իջնում սրտիս,
այլ երկնքից ծաղկաթերթ է
իջնում վրաս պսակում ինձ:

Հավատամ, դարձյալ հավատամ,
թե տանում եմ սիրո պես հեշտ
ամեն մի քար իջած կյանքիս,
ամեն մի լույս ու ցնծություն
և խարդավանք և լաց ու ծես—
ու քամին չի լալիս այսպես,
այլ աշխարհի սրտից, սիրուց
իմ բաժինն է պսակում ինձ:

Հավատամ, կրկին հավատամ,
որ աշուն չէ իջած թխպոտ,
դու ես կանչում ամեն կողմից
ջահելության սրինգն առած
նախշունելեկու և միամիտ—
հավատամ, որ ձյուն չի գալիս,
այլ երապդ է պսակում ինձ:

www.a-pdf.com

Հավատամ, երիցս հավատամ,
թե գիշեր է սովորական
ու գնում եմ մի քիչ գինով,
թե այսպես իբր մի ժամ, մի օր,
մի տարի, մի կյանք շարունակ
ես անվերջ տունս եմ գնում
պարպապես մի ուրիշ ճամփով:

ԴԵՌ ՉԱՐՉԱՐՎԻՐ, ՀԱՅՐ

Հորս՝ *Տիգրան Սիրունյանին*

Մեր փոքրիկ, բարի Հողը ասում է.—
ցանկապատի մոտ դեռ չարչարվիր, հայր,
դեռ ինչքան քար կա իմ սրտի վրա
և քարերի տակ ինչքան երականք,
որ պիտի շուռ տաս, հանես լույս աշխարհ,
դեռ քանի վտակ չի հասնում սիրուս
ու երակներս լի են կովության
աղի կարոտով:

Մեր այրող կրակ Ծաղիկն ասում է.—
ցանկապատի մոտ դեռ չարչարվիր, հայր,
թեև առաջինն ինձ դու ես գտել
խոտ ու փշի մեջ ու կոչել ծաղիկ,
քո ձեռքն է անվերջ ինձ համար արնել,
բայց սիրտդ դեռ ինձ չի տեսել կարգին
և թող որ ցոլամ, բաբախեմ, այրվեմ
աշխարհում՝ թողած հետքերիդ վրա:

www.a-pdf.com

Մեր բարձր շողշող Արևն ասում է.—
ցանկապատի մոտ դեռ չարչարվիր, հայր,
ես լույս կտամ քո հոգուն, մարմնին,
իսկ դու բաշխիր ինձ քո ջերմությունից
և պահպանիր ինձ ձմռանից տամուկ
և ցուրտ ամռանից պահիր-պահպանիր—
ինչ արած, քոնն է այս դարը դժվար,
ո՞ր դարը մարդուց չի ուզել վինվոր
իր ցանած արտի ու սիրո համար:

Տոհմիկ հայկական մեր Խիղճն ասում է.—
ցանկապատի մոտ դեռ չարչարվիր, հայր,
քո մի բուռ հացից մաս տուր հավքերին,
անցորդին, քամուն և տոկա, տոկա,
քարն այդպես է, որ խաչքար է մնում,
և հողն այդպես է աճում երկրից
առ երկինք ելնում, դառնում հայրենիք:

ԻՄԸ ՄԻ ԳՅՈՒՂ Է

Իմը մի գյուղ է՝
միշտ դաշտից դարձող,
ծնկահար թաղված ձյան ու ծաղկի մեջ,
աշխարհի վերելք, դժվար ճամփեքին:
Ինձ այնտեղ բերեց մի ճերմակ գառնուկ,
որ երկնի դռան կապված է հիմա
ալ ժապավենով:
Իմը մի գավ է՝
հունցված առաջին բրուտի ձեռքով,

www.a-pdf.com

լի պոկեպոռնկ անձրևով, սիրով,
որ ծարավիս լոկ ծարավ է տալիս:
Իմը մի խոսք է,
որ ես ասում եմ
արդեն երեսուն տարուց ավելի
ու չեմ ստանում կարգին պատասխան,
և մի սև գառ է,
որ երկրի դռանը ծաղիկ է քաղում
ու սպասում ինձ:

ԱՅՍ ՃԱՄՓԱՆ

Ո՞վ շնորհեց ինձ այս ճամփան,
որ հասցրեց լեռան կատար՝
բայց դեռ էլի ցած չբերեց,
պիտի արդեն ես գնայի
լեռնից էլ վեր,
տանեի լեռն իմ ետևից,
պիտի արդեն ես դնեի
ժայռը ժայռին,
հող լցնեի հողի վրա,
ջուր հեղեի ակունքներին...
Քանի հովիտ պիտի լիներ
իմ հոգու մեջ խուլ ծվարած,
որ շաղ տայի լեռան վրա
ու լեռը գար իմ ետևից...
Ո՞վ շնորհեց ինձ այս ճամփան,

www.a-pdf.com

որ ես անցնեմ մի ամբողջ կյանք՝
ընդամենը քաղեմ մի վարդ,
մի խոսք, մի հաց ու մի համբույր
աստծո շռայլ անդաստանից:

ԱՐԵԳԱԿԻ ՆԵՐՔՈ

Նա հստակ գիտե բոլորիս տեղը,
նա տեսնում է մեկ հեռու և մոտիկ ճամփեքի վրա
մեր մեծ ու փոքր հետքերին կապված,
մեր ողջ իղձերը ձգվում են դեպի նրա կրակը
ծառի, ծաղիկի ու մանկան տեսքով:
Ուրեմն էլ ինչո՞ւ մրաջուր խառնել շքեղ պատկերին
ու դուրս վտարվել գարնան պարտեզից:

Նա բաց է անում սեփական լույսով մեր փակ
սրտերը,
մեկ սուզում սիրո խաղաղ ջրերում—
ուրեմն էլ ինչո՞ւ անհոգի խոսքեր,
ուրեմն էլ ինչո՞ւ չարության սերմեր
ցորենի արտում, հացի հետ խառնած,
ուրեմն էլ ինչո՞ւ թաքնվել սիրուց
և ապրել թախծի, ցրտության կողքին:

Նա իր սեփական քաղցրությունից
մեկ հատար հաց ու երակ է հունցում

www.a-pdf.com

և ամեն մեկիս համար այրվում մեր կյանքի
չափով,—
ուրեմն էլ ինչո՞ւ կեղծ ու պատիր երգ,
ուրեմն էլ ինչո՞ւ ջուրը մտնելուց,
կրակն ընկնելուց տատանվել մի կյանք,
մնալ-օրորվել ծառերի կողքին՝ բայց ծառերից վատ,
մնալ-դայլայլել հավքերի կողքին՝ բայց հավքերից
վատ:

Նա մեկ ասում է՝
նրա համար եմ լույս հղում ձեզ,
որ իմ կյանքի չափ ճանապարհ անցնեք,
և դողաք ամեն անցնող-գնացող ամառվա համար,
իսկ ավելի շատ՝ եկող ամառվա,
որ ձեզ է գալիս երկրային մի ողջ
հավիտենության ճանապարհ անցած:
Ուրեմն էլ ինչո՞ւ վաղաժամ լքել
սերը՝ քեզ եկող, վարդը՝ քեզ պարված,
ուրեմն էլ ինչո՞ւ հալածել երկրից
տաղը, խնձորը, լուսնի տավիղը,
էլ ինչո՞ւ թափել գինու գավաթը շուրթերիդ հասած:

ԾԱՂԻԿԸ

Այս աշխարհում վարմանալի
ցոլաց փոքրիկ, խիզախ մի կյանք
գործված ամռան տաք լույսերից,
մարմինն հողի թռիչք՝ սանձված,

www.a-pdf.com

սիրտն արցունքի արծաթ ղողանջ,
շարժումը՝ բույր, սերն՝ առեղծված:

Շարժումը՝ բույր, սերն՝ առեղծված,
սիրտն՝ արցունքի արծաթ ղողանջ,
այս աշխարհում կարմանալի
նա երապեց ցավ ու խինդի
հաշտությունը անհնարին:

Նա երապեց ցավ ու խինդի
հաշտությունը անհնարին,
մինչև որ իր աստղի կամքով
նույն բախտի մեջ ծնունդ առան
իր իսկ բաժին օձն ու մեղուն
և օձը՝ իր հոգին խայթեց,
մեղվից լոկ շուրթը քաղցրացավ...

Այս աշխարհում կարմանալի...

ԻՄ ՄՈՐ ԱՆԳԻՆ ՆՎԵՐԸ

Իմ նշանը սերն է,
որ թողնում եմ ուր պատահի:

Աստղը, որին հնապանդ եմ,
ինձ հալածում է՝ ուր պատահի:

www.a-pdf.com

Իմ պահը մանուկ լույսն է առավոտի
աշխարհ եկած սիրահոժար:

Սիրտս, որ իմ լացի գավն է,
դատարկում եմ ուր պատահի:

Իմ թռիչքը քսվում է անկումի սև պատերին
և ինձ անվերջ տանում դեպի լույս աշխարհ:

Երգը, որ իմ մոր անգին նվերն է,
ես կորցնում եմ ուր պատահի:

www.a-pdf.com

ԴԺՎԱՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

/ ՊՈԵՄ /

ԴԺՎԱՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

(Պոեմ)

1

Խոր ինքնասուզման երանության մեջ
ես ճաշակեցի անհամար բառեր,
և բյուր պատկերներ աչքս շոյեցին:
Բայց նրանց թողած գնացի երկար
պատմության միջով, տաղի, արցունքի
և պաղ լռության եզերով խավար,
որտեղով միայն տնցնում է հոգին:
Ու տեսա Հողը, Ջուրը, Ծաղիկը
Մարութա լանջին, սիրո մեջ ցնծուն,
Իմ Սիրուն պապը նրանց սրտերից
աստծո նման մեր սկիզբն էր հունցում:

www.a-pdf.com

Ես տեսա հստակ, որոշ ամեն բան,
մեր գյուղը՝ կեցած Մարութա սարին,
անտառի խորքում, ծմակոտ՝ Ծման
բույրի մեջ տանձի, խունկի, մեղրի:
Ու իմ փայտագործ հոգնատանջ տոհմը
իրիկնահացի սեղանի առաջ,
տատիկներ շարժուն, հարսիկներ նախշուն
ու օրորոցներ՝ քառասունից շատ:
Երբ հասա այնտեղ, մանուկ էի արդեն,
իմ մայրերը ինձ դրին օրորոց,
այնտեղ արարման օրերն էին դեռ
և չէին ջոկվում մարդ, աստղ ու բոց:

2

Ես հասկացել եմ, համոզվել խորին,
որ մարդը կա իր ծնունդից առաջ
իր ցեղի բոլոր ժամանակներում
իբրև սեր, կարոտ, կռիվ, ափսոսանք՝
ցեղի տենչերում և խոյանքներում
անանուն փակված:
Անանուն, քանզի իր մարմնում չէ,
բայց դուրս է հորդում, ելնում լայն աշխարհ
ցեղակիցների ողջ սերերի հետ,
սիրում է, սակայն չի հալվում սիրուց,
կարոտում է, բայց թռչուն չի դառնում,

www.a-pdf.com

ցեղակցի կամքով
կռվում է, բայց չի մեռնում նրա հետ,
պտտվում է հար, հոլովվում խրթին
ցեղի տենչերում և խոյանքներում
այնքան ժամանակ,
մինչև որ կավը խպառ հասուննա—
մարդն առնի մարմին ու իջնի աշխարհ՝
ծննդյան օրից կարգված իշխան
իր ժողովրդի
և կորուստներին և զանձերին թանկ:

3

Իր եղբոր անվամբ ինձ կոչեց պապս
քառասունիննի դեկտեմբեր ամսին,
երբ ցուրտ էր դաժան և հացն էր պակաս
և գերմանացու վերքն էր դեռ ուսին...
«Եղբայրս,— ասաց,— վարպետ էր ընտիր,
խորոտ-մորոտիկ օրոցք էր սարքում,
գդալ ու շերեփ, արոր ու հատիչ
ու տանում Մշո շուկայում ծախում:
Ինչ խաս վարպետ էր, նայում էր փայտին՝
փայտի խորքերից նախշն ելնում էր դուրս,
հետն էլ երգում էր խորն ու անուշիկ,
երգը լցվում էր, ծաղկում նախշերում:
Է, նրա նախշուն օրորոցները
մինչև հիմա էլ օրորվում են դեռ
Սասնա սարերում ու Մշո դաշտում,
կողերին նիրհած թրքուհի մայրեր...»:

www.a-pdf.com

4

Մարութա սարից իջնում էր ներքև
մի ոսկե տղա,
արևն ասում էր՝ դու ինձ վառեցիր,
ջուրն ասում էր՝ քո ծարավին եկա,
ծաղիկն ասում էր՝ քո հետքն ինձ բերեց,
սերը ասում էր՝ բախիր իմ դուռը:
Մի ոսկե տղա՝ արևի, ջրի,
ծաղկի ու սիրո փրփուրների մեջ,
չարի ու բարու բարդ հոլովույթին
անգիտակ իսպառ,
իր ցեղի բացած միամիտ ճամփով
Մարութա սարից իջնում էր ներքև,
դեպի մեծ աշխարհ:

5

Խոր ինքնասուզման երանության մեջ
ես հասա Սասուն, մնացի այնտեղ
մինչև սև օրը ջարդի ու գաղթի:
Զահել վարպետը Մուշից ետ չեկավ,
պոհվեց իր շքեղ հորինվածքի մեջ,
կարդ ու նախշերը ցիրուցան եղան
երկրի վրա ու երկնքով մեկ:
Զոհվող-հեռացող շարքերի վրա,
աշխարհին իջած հորիզոնին սև
լուսավոր գծով ձգվեցին դանդաղ

www.a-pdf.com

փայտից համբարձած ոգեղեն նախշեր:
Սակայն դա գաղթ չէր: Նախշերի երթը
հորդում էր Սասնա աշխարհի սրտից,
անցնում էր վերից ու մարդկանց հոգուն
շիթ առ շիթ հղում լույսը ամոքիչ,
լույսը արվեստի, ոգու ցնծության,
լույսը պատմության, չընկրկող հունի,
լույսը, որ գիտի երկնային ճամփա,
որ գաղթի պահին անգամ գաղթ չունի:

6

Ժանգոտ, մոխրագույն գծերով գործված
մեր գյուղը՝ կպած Արագած սարին—
վարդ էր, աղջիկ էր՝ դառը պատժված,
հենց շարժվեր՝ ոտքը առնում էր քարին:
Ձեռքին անձրևի դատարկ սափոր էր,
շուրթին՝ անուշ երգ անձրևի մասին,
ոտքին՝ օձի փուշ, կծու օշինդր,
գյուղը ճոճվում էր Արագած սարին:
Ամառն էր գալիս՝ շեկմակ բորենի,
հարավից քշված՝ քար ու հող լիկում,
երկնքի դիմաց անպոր, թևաթափ
մեղկանում էին մարդ ու անասուն:
Քանի՞ այգի էր փրկվում բորենուց,
չգիտեմ, մերը միշտ լոռի էր գնում,
ես մի անգամ սուրբ Գևորգի ուխտին
խաղող գողացա դրկիցի այգուց:

www.a-pdf.com

Հայրս շատ ծեծեց, մայրս լաց եղավ,
նկովեցին բախտ, ժամանակ ու դար
ու սուրբ Գևորգին արին աղաչանք.
— Անառակ որդուն վերցրու, մեկնից տար:

Իսկ մի իրիկուն մեր փոքրիկ բակից
ինչ որ ձայներ ինձ տարան իսկապես,
ծիրանի ծառով բարձրացա քիչ-քիչ,
մթնող լաջվարդի եզրով ելա վեր,
դիպա մեր Կապույտ աղբյուրի շիթին
երկնի ակունքում ու խմեցի կուշտ,
ճաշակեցի մեր խաղողը հակինթ,
որ ձգվել երկնի այգում էր աճում:
Հետո էլ ինչեր ճաշակեցի ես,
գույն ու ելևէջ, համբույր ու թրթիռ,
երանությունից ծաղկել էր աչքս,
լուսավոր մի հավք դիպել էր սրտիս:
Թե երբ դարձա ետ՝ ինքս էլ չիմացա,
մայրիկը հոգնած նիրհում էր դրսում,
հայրիկը հսկա գերանդուն կոթնած՝
սրում էր, սուլում, բարկանում, խոսում:
Ես հորս ասի՝ հենց նոր երգ տեսա
ծիրանի ծառին, մարգերում, օդում...
Հայրս նայեց ինձ՝ շվարեց, մնաց,
շատ էի փոխվել, ինձ չէր ճանաչում:

www.a-pdf.com

7

Ինձ ճանաչում էր ջուրը
մշտահոս, կվարթ,
և լռությունը ծանր
փշի պես ելած
ջրի հեռքերից,
ինձ ճանաչում էր Աստղը
խորունկ երկնքից,
նրա սուրն ու համբույրը
իջել էր սրտիս
և սերը ցնծուն, սերը,
որ ինձ էր նայում
գիշերից ու ցերեկից:
Ինձ ճանաչում էր արդեն
և խավար քարը,
որ մութ, լեռնթաց սողքով
ելնում էր դեմս—
այդտեղ, փորձության քարի
ծանրության առաջ
հավիտյանս ավարտվեց
ինձ տանող ճամփան:
Արդեն երակն էր հեռու
ու դեմս էր վերելք,
արդեն ես ճամփան էի
ու ճամփորդը նաև...

www.a-pdf.com

8

Ինչ գիշեր էր, մրից խավար,
գառները տուն չէին եկել,
տնով-տեղով ոտի ելանք,
առանց իրար բան ասելու
հայրս գնաց սարերի կողմ,
մայրս դեպի դաշտը գնաց,
եղբայրիկս դեպի հյուսիս,
իսկ ես՝ հարավ:
Ինչ գիշեր էր, մրից խավար,
հետո բարակ անձրև եկավ,
ժամերն անցան ծանր-ծանր,
մինչև մգլած բամբակի պես
լույսը բացվեց:
Գյուղից հեռու մի հովտի մեջ
հանդիպեցինք՝ խոսքներս մեկ արածի պես,
ոչ մի գառ էլ չէինք գտել,
հորս ուսին մի խուրձ ցախ էր,
մորս ձեռքին՝ կակաչի փունջ:
Գյուղից հեռու մի հովտի մեջ,
մեծ աշխարհի մի խուլ խորշում
իրար գրկած բոլորս այնպես
լաց էինք լինում դառն ու անուշ,
դառն ու անուշ իրար գրկած:
Այդ օրը ես նոր հասկացա՝ գտնելն ինչ է
և մանավանդ կորուստն է ինչ:

www.a-pdf.com

Ինձ թվում է միշտ, որ ես ապրում եմ
նաև կյանքով այն ջահել վարպետի,
որ կարմանալի տեսիլքների մեջ
հասկ ու ծաղիկ էր հանում փայտերից:
Երբեմն, որ իմ անունն են տալիս,
մեջս շարժվում է վարպետը ջահել,
իր անվան կանչին դառնում ունկնդիր,
լեկվովս աշխարհին ասում է՝ բարև:
Տանում է հաճախ ինձ իր քայլերով
և իր աչքերով ինձ ասում՝ նայիր
ծառին, երկնքին, գույներին փողփող,
ծով շարժումներին, լռությանն անծիր:
Ինձ տանում է մի ծաղկի ետևից,
տանում փշերով, ծերպերով ընկած,
հորդորում՝ հասիր և մի երկնչիր,
գեղեցկությանը մեծ-փոքր չկա:
Երբեմն երգում է իր սիրո մասին
հեռավոր, անցած գույներով հորդուն,
այդ պահին ինչ որ աղջկա կողքին
հնաոճ եմ խիստ, օտար իր հոգուն:
Իսկ երբ անձրև է գալիս անպատեհ,
տխրում է, դառնում գիշերվա անդունդ,
ինձ ասում են, թե ինչ է պատահել,
մթնել ես, ասես տունդ է կաթում:

www.a-pdf.com

10

Եղավ, որ ներդաշնակ աշխարհը
իմ շուրջը քանդվեց գիծ առ գիծ,
ամեն ինչ՝ սիրելի և օտար
բեկոր-բեկոր հեռացավ ինձնից...
Մի կյանք ամեն ինչ մնաց այդպես խառ,
մինչև լույսը արարեց կրկին
բոլորովին մի ուրիշ աշխարհ:

Սեղմվում ու բացվում էր օդը,
հողը փախչում ու կանգնում էր իմ դեմ,
կյանքն ինձ կպել էր կրակի պես...
Եվ ինչ էր եղել. ընդամենը
մի աղջիկ ասաց՝ սիրում եմ քեզ,
ասաց՝ տեսնում եմ, առաջինն եմ,
ոչինչ, մի դողա, ի՞նչ է եղել,
բոլորս էլ մեր կյանքում մի անգամ
ունենում ենք այդպիսի մի թանկ դող,
դե խոսիր, թե մտքիդ մի բան կա,
չեմ սիրում տղաներին վախկոտ:

Այդ պահին ես ինչ իմանայի,
որ իմ ուսին դեռ շատ-շատ հետո
պիտի նստի սիրո աղավնին:

... Սեղմվում ու բացվում էր օդը,
հողը փախչում ու կանգնում էր իմ դեմ,

www.a-pdf.com

կյանքն ինձ կպել էր կրակի պես,
ես կգում էի իմ նոր ծնունդը,
բայց այս անգամ արդեն ուրիշ կերպ—
ես ոչ թե իջնում էի վերից,
այլ ցածից էի ելնում վերև:

11

Երգեր տեսա ծիրանենուն
և հնձվորի ուսին նստած,
աղջիկների փակ սրտերում
և քարերի սրտերում բաց:
Ջահել վարպետն ինձ հետ էր միշտ,
մտնում էինք վնգուն, վստահ—
երգի բացած ոսկե դռնից
կամ միասին մնում ձյան տակ:
Նա բեռ չէր իմ կյանքը մաշող,
նա հոգի էր չխարակված,
պտտվում էր մեջս ցավով,
հում կավի պես փնտրում քուրա,
բառի կես էր ու թռչնի կես,
սիրո կես էր, կես՝ երապի,
պտտվում էր, վառվում մեջս,
որ միանար իր մյուս կեսին:
Նա հոգի էր, հույսի նշան,
համ էր, բույր էր ու նուրբ թրթիռ,
որ եկել էր մի օր աշխարհ,
բայց չէր հասցրել առնել թռիչք:

www.a-pdf.com

12

Զահել վարպետն ինձ հետ է միշտ...
Ես քաղում եմ վարդ ու հնչյուն,
տագնապ ու լույս, երապ ու ճիչ
երկնի-երկրի երակներում,
հյուսում նրանց՝ մի մարմնի մեջ,
ապա գծում ծնունդն այդ նոր
ոսկեփայլով հորս ուժի,
մորս թողած ծարավ-սիրով:
Զահել վարպետն ինձ հետ է միշտ...
Նրա նշանն իջնում է ցած,
լույսով գծում երկրի ճակտին
ոսկի խաղող ու ոսկի հասկ,
նշխար-նշխար երգի արտում
անձրևում է հնօրյա սեր,
վաղնջական խինդ հավվագյուտ,
որ այս հողին են արարվել:
Բերում է դեմս անցյալը մեր՝
նախշկեն մի գորգ՝ քամու տարած,
վրան՝ աստղի երապ փայլեր,
շուրջը լուսնի մոխրե խավար:

13

Աստծո մի օր խլրտաց մեջս
կավը գոհության,
սիրո աստղերը բոլորեցին ինձ,
համբույրներ տվին

www.a-pdf.com

ու կյանքիս վրա անհուն ցնծությամբ
ցնծաց մեղեդին միակ դրախտի:
Քաղցրիկ հույզերում, արդար խոհերում,
պտտվեց կավը, հոլովվեց դժվար
ու կավի սրտից ճախրեց լուսածիր
մայրենի լեզվի,
տոհմական խղճի,
արյան,
պատմության
կենսական մի փունջ՝ առաջնեկ որդիս:
Բայց նա չիմացավ, որ իր ծննդյան
առաջին պահից
սրտին միջից իր սրտիկին ծորաց
ջահել վարպետի կիսատ երազից
ու կիսատ սիրուց մի անուշ պատառ,
մի դժվար պատառ:

14

Ինչպե՞ս քո ժանգը դարձավ ոսկեգույն,
մոխրագույնն՝ արծաթ, ինչպե՞ս եղավ, որ
կարծրությունը պատժված հոգուդ
ցոլ տվեց, դարձավ հարսանյաց խնձոր...
Դու այն նույն վարդն ես՝ ցնծուն թերթերով,
աղջիկ ես՝ այգու եզրին կանգնած,
ուսիդ անձրևով փխրուն սափոր,
շուրջդ կանաչ օր, կանաչ մանուկներ,
վվարթ երգ ու խաղ, աստղիկ ու մեղու...

www.a-pdf.com

Մանուկներիդ մեջ ես էլ կամ, գիտեմ,
բայց ո՞րն եմ՝ երբեք չեմ իմանալու:

15

Այնպես հեշտ ու այնպես դժվար
ապրում եմ կյանքն ինձ ընծայված,
հեշտը օրերն են իմ անկարգ,
դժվարը երգն է ու հացը:
Հեշտը գործերն են առտնին,
որ անում եմ կամ չեմ անում,
դրանց համար ինձ չեն գովում,
ոչ մանավանդ հանդիմանում:
Հեշտն աշխարհի մեջ լինելն է,
վայելքներում հապար հապար,
դժվարն երկրիս հետ լինելն է՝
բառերիս մեջ խոսքը նրա:
Հեշտը կանգնել-ընդհատվելն է,
դժվարը երթը՝ն է անկանգ
և ծնվելը ցավի միջից
որպես խոզի, սիրո՛ վավակ,
բայց նույն պահին հար հարապատ
լինել հայրը խոզի, սիրո,
ամեն վայրկյան գալ անցյալից,
ամեն վայրկյան լինել միշտ նոր:

www.a-pdf.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երաշեալի բախտ ու շնորհ

Ծիրանենի 3
Այս կյանքն ի վեր 4
Մարդու կյանքը 5
Ուշանցի ծերունին 6
Տուն արի 6
Սրտի բեռը 7
Զարմանք կյանք 8
Հրաշք 9
Ծառը 10
Խոսք իմ մեծ պապին 11
Բալլադ մեր տան մասին 12
Արևհատ տեսիլք 14
Ծննդավայր 15
Շնորհում 16
Մայրը 18
Մի երգի չափ ու լացի 19
Մի իրիկուն 20
Ախր ինչպե՞ս եղավ 21
Այդպես դու կյանքում 23
Կոմիտաս աստղը 24
Էլ, Մոմիկ վարպետ 24
Նահապետ Քուչակ 26
Բարդու վրա 27
Բարով եկա, բարով գնամ 28
Այսպես տեսա 29
Զվարթնոց 30
Աշնան օր 31
Երգն ինձ ասաց 32
Ղուկաս տղա 33
Խաղաղություն—ծաղիկը 34

www.a-pdf.com

Երանելի բախտ ու շնորհ

Երանելի բախտ ու շնորհ 37
Ա. Այս աշխարհում 37
Բ. Ես ինչպե՞ս եկա 38
Գ. Ծաղիկն ինձ ասաց 38
Դ. Ցորենն ինձ ասաց 39
Ե. Ջորն է ցոլում հորդ... 40
Զ. Անանուն գրիչ 40
Է. Աղջիկները ակից էլ ջուր չեն տանում . . 41
Ը. Ես անցնում էի քարերի միջով . . . 42
Թ. Ես տեսել եմ անձրևի լաց 42
Ժ. Տարիքիս լեռը ելնելիս 43
Ի. Գնում եմ դարձյալ 44

Մայրամե

Ի՞նչ ասացի, ի՞նչ ասացիր 46
Բաց թող, ասացիր, վարդի թուփը . . . 47
Արև էր, արև կանաչ-կարմիր . . . 48
Մայրամե 48
Այս ամռան գինը 49
Մի ասա 50
Ես գոհ եղա հավիտյանս 51
Աղջիկը 53
Հույս 53
Մի ներիր ինձ 55
Երևի 56
Կանուչ օր 57
Ինչպես անուշ հոգինվածք 57
Լուսաստող-նշանիս մատանի 59
Աշուն 60
Խնձոր ես կարմիր, կարմիր 60
Մի անցորդ մարդ խմեց, գնաց 61
Ի՞նչ իմանաս քանի անգամ 62
Կանչեմ 63
Անձրևը 64
Այս ձյունը, այս երգը 65
Հարդափոքին 66
Աղբյուրը բխում է քարից 67
Կամաց-կամաց 67
Դժվար հրաժեշտ 68
Սկզբ, երգի ցնծության մեջ 69
Ծանր պար 70

www.a-pdf.com

Ամառային ռիթմ 71
Աշնանային 72
Գնամ հիմա 73
Հին է սիրո այս շարժումը 73
Պարահանդեսում 74
Երգի ու քո միջև 75
Երգ 76
Համբարձում 77
Պատկեր գյուղական սրբով 78
Վարար անձրև 79
Կանչեցի՝ տերև, տերև 80

Ի պահ մայր հողին

Սառդ և սառդափուշ 82
Երանություն 83
Աշոռ Երկաթի ռսկե փուշը 84
Մանուկ արքայազնի ձայնը 85
Ի պահ մայր հողին 87
Փոքրիկ հրաշք անկյունը 88
Անուղղելի եմ 89
Լուցկին 90
Զյունը 91
Երազի պես 92
Չէ որ դա էլ շնորհ է մեծ 93
Դարձյալ փուշն է խլրտում 94
Երկրի չքնաղ վայրերի մեջ 96
Զայնը 97
Կանչ 98
Խոր ձմռան մեջ 99
Մի՞թե այնքան շատ գանձ եմ կորցրել . . . 100
Անցվոր ջրի ափին 101
Անթառամ ծաղիկ 102
Հանգստանամ 103
Դեռ չարչարվիր, հայր 104
Իմը մի գյուղ է 105
Այս ճամփան 106
Արեգակի ներքո 107
Ծաղիկը 108
Իմ մոր անգին նվերը 109
Դժվար շարունակություն (պոեմ) 111

www.a-pdf.com

Ղուկաս Տիգրանի Սիրուճյան
ՄԱՅՐԱՄԵ
Բանաստեղծություններ

Сируиян Гукас Тигранович
МАЙРАМЕ
Стихи
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван 1984

Խմբագիր՝ Դ. Մ. Սարգսյան
Նկարիչ՝ Ֆ. Ա. Գուլանյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան
Վերատուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Աբրահամյան

ԻԲ № 4955
Հանձնված է շարվածքի՝ 15. 06. 84 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 2. 08. 84 թ.:
Ֆորմատ՝ 70×90¹/₃₂: Թուղթ տպագրական № 2: Տառատեսակ՝ «Մնացականյան»: Տպագրություն՝ բարձր: 4,68 պայմ. տպագր. մամ., 4,75 պայմ. ներկ. թերթ., 4,3 հրատ. մամ:
Պատվեր՝ 1384: ՎՖ 09409: Տպաքանակ՝ 3000: Գինը՝ 45 կ.:
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 9, Տերյան 91:
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна 91.
Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Արտաշատի շրջանային տպարան:
Арташатская районная типография Госкомитета по делам издательств. полиграфии и книжной торговли Арм. ССР

www.a-pdf.com

45 կ.

ՂԱՐԵԳԻՆ ՄԻՐԶԱՅԱՆԸ ծնվել է 1940 թվականին. ապրում է Երևան: 1971 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1977 թ. լույս է ընծայել բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Խրիկան բարի գարնան առավոտ» խորագրով: Ապրանքում լույս են տեսել նրա «Ջվարթ համփարձներ» մանկական գրքույկը (1980 թ.) և «Ընծաներ» (1987 թ.) ժողովածուները:

«Մայրամուտ» բանաստեղծությունը յուրաքանչյուր գիրքն է:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»